


ԳԵՎՈՐԳՆԻԱՆՑ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



891.99

Դ-66

Ա.ԶԵՐՆԵՇՐ

Բազմ.—1934

19 NOV 2017

891-99

Բ-66

01 JAN 2003

ԳԵՎՈՐԳ ԲԼԱՆՑ

ՊԱՏՄՎԱԾԻՆԵՐ

ԱԶԵՐՆԵՇՐ
Բազու — 1934

Խմբագիր Յե. Չուբար
Տեխ. խմբագիր Ա. Արևան

Պ Ա Յ Ք Ա Ր Ը

Յերեկոն իջել ե գյուղում:

Տներում պայծառ աստղերի պես փայլում են
եղեքորական լամպերը: Մթուժյան մեջ հսկա
լեռը լայն կուրծքը դեմ ե տվել- յերկնքին ե
տասնյակ եղեքորական աչքերով դիտում ե իր
ստորոտներին:

Մեկ տարի առաջ, յերբ գյուղ յեկավ կոլտն-
տեսության մեքենադաջը գյուղի փողոցներում
իրար հետեվից կանգնեցին յերկար սյուները ե
նրանց ճակատից սկսեցին փայլել եղեքորական
լամպերը:

Այնուհետեվ մեքենադաջը սկսեց բաց թողնել
եղեքորական լարերի կծիկը ե իր ցանցը տարա-
ձեց կոլտնտեսականների տներում, վորոնք բազ-
մել եյին հսկա լեռան լանջին:

Հիմա գյուղի վերին թաղում, հարվածային
Սեվի ապրր յերկրհարկանի, նորակառույց տան
պատշգամբում նույնպես ժպտում ե եղեքորական
լամպը:

Սեվի ապերը 60 տարեկան գործույա, գեր-
հարվածային, ծերուկ եր: Սպիտակ միրուքով,

բարի ժպիտը յերեսին, լայն թիկունքով և յերկար բոյով այդ շինականը տաս տարեկան հասակից աշխատում եր կանաչավետ դաշտերում։ Ու իր կյանքի վերջին տարիներում Սեվի ապերը մտնելով կոլտնտեսային քաղցր կյանքը, աշխատանքի բուշեիկյան ուրինակներ եր ցույց տալիս։

— Յերբ ծուլ շարժվենք, ժամանակը հոսալով կանցնի, արտերում բամբակն ու ցորենը կմնան թափված, կուլակը գործը կտեսնի, իսկ մենք ել նեղության մեջ կմնանք։— այդպես եր ասում Սեվի ապերը յերիդասարդ կոլտնտեսականներին և նրանց հետ մրցման մեջ մտնում։

Յերեկոները նրա պատեֆոնը շիքյաստա յե նվագում, կլկացնում, իսկ ինքը ձեռքը ծնոտին պահ տված լսում ու շարունակ կատակ ե անում թոռների հետ։

Այդ յերեկո Սեվի ապոր պատեֆոնն ավելի աշխուժ եր նվագում։ Յերգի ձայնը ավելի խրոխտ ե դուրս գալիս, վարովհետեւ ցանքսի պլանի ցուցանիշները կոլտնտեսությունում առաջ են վազում ու առատ բեռք խոստանում։

— Աղջի Մանիշակ, եսպես լավ ա չե՞, կուտընտեսություն չեյիր գալիս, հիմա կեր ու ապրիր։ — ասաց Սեվի ապերն ու խոշոր աչքերն ուղղեց կնոջ վրա։

— Բո հո, եդ վոնց յեղավ, վոր յես կոլտնտեսության դեմ գնացի, իսկ դու՝ չե...

— Ըիշտն ասենք այ կնիկ, հիմա յես եդպես

ասում, յերբ մի քանի տարի առաջ յեգներդ կոլտնտեսություն քշեցի, յերեսս սկսեցիր պոկել...

— Այ մարդ խելքդ քամին տարել ամ...

— Ձե, կնիկ ջան չե, հենց քեֆս գալիս ա, վոր եդպես ջգրվում ես... պատասխանեց Սեվի ապերն ու պատեֆոնն ելի գործի դցեց։

Պատեֆոնը ծոր տալով կլկացրեց շիքյաստան։ Յորեն հացն ու խորովածը թափվեցին սեղանի վրա։

Մյաքունց Պողոսի տանն ելեքտրական լույս չկար։ Այնտեղ լայն սեղանի վրա վառվում ե մի խոշոր լամպ։ Յերբ գլուղում դեռ ելեքտրական լույս չկար այդ լամպը հարգանք ու պատիվ ունեեր։

Ժողովի կամ թատրոնի ժամանակ գլուղի յերիտասարդները գալիս խնդրում էյին Մյաքունց Պողոսին, վոր մի կերպ համաձայնվում եր մի քանի ժամով տալ, այն հլ առանց նավթի։

Ու ամեն անգամ Պողոսը լամպը դատարկ տալիս եր տղորցը և նավթով լիքը հետ ստանում։

Այդ յերեկո Պողոսը տխուր եր։ Նա լսում եր Սեվի ապոր պատեֆոնի կլկոցը, ջղայնությունից ատամները կըճտացնում։

— Բա եդ վոնց յեղավ, վոր խալխին նյոքար Սեվին յեկավ ու ինձանից անցավ... Մտածում եր Պողոսը ձեռքերը հետեւին բռնած, դողդողալով դես ու դեն գնում և յեթե այդ բոպեյին Սեվի ապոր կլկացող պատեֆոնը նրա մոտ լիներ,

նա փշուր-փշուր կաներ, փչացներ ու հանգիստ սրտով քուռ մտներ:

Սակայն... պատեֆոնը դեռ կլկլացնում էր ու ելեքտրական լամպի ուժեղ լույսը թուլացնում Պողոսի լամպի «հղորությունը»:

* * *

Դաշտերն ու այգիները կանաչել, գուգվել էին:

Առունները սառցե պատյաններից դուրս յեկած, քջքջալով վազում էին դեպի ձորերը:

Լայնարձակ դաշտերում տրակտորները փնչացնելով պատռում էին յերկրի կուրծքը, թողնելով իրենց հետեվից սեվ ու խոր ակոսներ:

Ու վաղ առավոտյան, յերբ մութը հրաժեշտ տալով հավաքում էր իր սեվ սալանը Վարդաշատ գյուղի կոլտնտեսություն անդամները բրիգադների բաժանված ցրվում էին դաշտերում:

Սեվի ապերը բոլորից շուտ էր աշխատանքի դուրս գալիս. նրա բրիգադան հարվածային թափով պայքարում էր բամբակի համար:

Գյուղում աշխատող ձեռք չկա, բոլորը դաշտերումն են: Կոշտացած ձեռքերը շփվում են ցորենին, բամբակենու սերմերին, մեքենաներին, տրակտորներին:

Ու տրակտորներն իրար հետեվից լայն ակոսներ էին շարում դաշտերում: Շարքացան մեքենան արագ թափով աշխատում էր:

— Սեվի ապեր, վոր եսպես աշխատենք պլանը բավականին կգերակատարենք, չե՞. — տղորցը մո-

տենալով հեռվից բացականչեց կոլտնտեսություն անդամ հայրապետը:

Իհարկե՞ կուլակներին. աչքն էլ չենք հանիլ: Բայց Հայրապետ, վորդիս, չե՞ վորդ դու յես ասում, վոր ինչքան շատ բամբակ ունենաք, այնքան իլ պինդ խփած կլինենք դասակարգային թշնամու դնչին, այդպես ա չե՞...

— Ի՞նչ կա վոր... —

— Են կա, վոր Սողոն, Մամիկոնը ու ելի մի քանի հողի լողրություն են անում ու մեր աշխատանքը խանգարում, ախպեր հեռացրու ելի: Խի պահում ես եդ լողրերին...

— Ծիշտ ես ասում Սեվի ապեր, չենք թողնիլ այդպես շարունակեն, միամիտ կաց...

Ու ելի ջուտ ձեռքերն սկսեցին արագորեն շարժվել, շարքացանները պտտվեցին և սերմերը թագնվեցին հողի ծոցում:

Ուշ յերեկոյան, յերբ կոլտնտեսականները վերադառնում էին աշխատանքից, կոմսոմոլ Հայկոն թռչկոտելով մոտենում է Սեվի ապորն ու ասում..

— Սեվի ապեր, հայրուր քառասուն հեկտար պլանից ավել ցանեցինք, վո՞նց ես կարծում, քիչ է՞...

Սեվի ապերը սեվուռն հայացքով նայեց Հայկոյի վառվռուն աչքերին ու դո՞հ սրտով պատասխանեց:—

— Չե, բալաս, քիչ չե, յեթե ամեն մի կոլտնտեսություն մեզ պես շարժվի, տես ինչեր կանենք է...

—Սեվի ապերը գոհ ե տղերք. բացականչեցին կոլտնտեսականները և նրան վերցրին իրենց ձեռների վրա:

Սեվի ապոր փափախը ողում պատվելով դըմփաց գետնին, իսկ չուխայի փեշերն սկսեցին խաղալ:

Յեվ նույն, գիշերը պողպատյա լարերով թռչում եր հետեվյալ հեռագիրը:

—Վարդաբաս գյուղի կոյսնեստությունը գարնանացանի պլանը գերակա՞րեց: Պլանից ավել հայրուր քառասուն հեկտար:

—*

Այն որերին յերը կոլտնտեսությունը նոր եր կազմակերպվում, յերը Վարդաշատ գյուղի ակտիվը համախմբում եր իր ուժերը կոլեկտիվն ավելի ամրապնդելու համար, մի որ գյուղում հանկարծ տագնապ ընկավ:

—Ա. տնաքանդեր, կոտորեցին... հասաք... Ամբողջ ուժերը լարած կանչում եր գյուղի ներքին թաղից նախկին մենատնտես Վանեսը:

Կոլտնտեսականներն ու մենատնտես գյուղացիները վազեցին դեպի ներքին թաղը: Կանաք սարսափի մատնված, վորը զլխաբաց, վորը վտառորել վազեցին նրանց յետևից:

Սեվի ապերն այդ ժամանակ գյուղի վերին թաղի կալուսն եր: Նա տեղիցը բոլորովին չջարժվեց: Նա հասկացավ սպասելիք ձախորդությունն եյությունը:

Լացն ու շիվանը յերկինք բարձրացավ: Ասում են «Դերանց հանդի» մոտերքը հրացա-

նաճգություն ե տեղի ունեցել, իսկ շատերը պատմում են, վոր կոլտնտեսականների կարմիր արյունը տերտերանց տափաստանի կանաչ խոտերը ներկել են:

Գյուղացիները յեվ կոլտնտեսականները ահ ու սարսափի մատնված բամբակաքաղը թողել ու հանդերից վերադառնում եյին: Գյուղի կոմունիստներն ու կոմյերիտականներն ել ակտիվ անկուսակցականների հետ հրացանների փորից պինդ բռնած վաղում եյին դեպի «Դերանց հանդը», վորը թագնված եր սաղարթախիտ անտառների յետեվում:

—Ա. խալխը, բա ձեզ գործ չունեք խի՞ գյուղացիներին գործից ավարա յեք անում.— յերկար դադանակը ձեռքին, ճանապարհ բաց անելով Սեվի ապերը մոտեցավ հավաքված գյուղացիներին:

—Սեվի ապեր, տղորցը կոտորեցին,—հարայ տալով բացականչեցին կանաքը:

—Սուտ ա, բա սավետը մեռելա, վոր տղորցը կոտորեն...

—Վե՞նց թե սուտ ա, բա յես աչքովս տեսա, մի դաստա կոլտնտեսականների հետ գնում եյիք «Դադադան» բամբակ բերելու, «Դերանց հանդով» զնալիս մի շարք հրացանավորներ հանկարծ առաջներս դուրս յեկան ու մի հրացան պայթեց թե չե Սաքունց Վերդին վայ արավ, ել չիմացա թե ինչ պատահեց, նրանից հետո լծած սայլս թողի ու յետ փախա.— կակազելով ասաց Վանեսը:

—Փախար... անամիթ...

—Տղերք, սպասեցեք.—միջամտեց Սեվի ապերը յեվ դիմեց Վանեսին.—պրծար Վանես ...

—Հա, ել ասելու բան կա, վոր ...

—Դե լսեք ժողովուրդ: Վանես դու ել լսիր, մեծ մարդ եմ հալքաթ մի բան հասկանում եմ:

—Ասա ... ասա ...

—Հրացանաձգություն կարողա պատահած լինի, կարողա յեվ կոլխողականի արյունը կանաչը ներկած լինի, հավանական ա քանի կուլակը աւտամները մեզ վրա կրճտացնում ա: Բայց լավ իմացեք վոչ զազրանիցա զորքա յեկել յեվ վոչ ել կոխվ ա լինելու: Եդ քո զորք ասածդ Վանես, մեր գյուղի կուլակ Իշխանբեկյաններն ու Մաքոյունց են ու նրանց նմաները, հասկանում ես ...

—Դուզ ա ...

—Գյուղացիներ, կոլխողական ընկերներ, Իշխանբեկյանների կերած տեղերը ցավում ա, հասկացաք, թշնամին մինչ հոգին փչելը դիրքերը չի հանձնելու ...

—Սեվի ապեր, ախր դե ենքան Իշխանբեկյաններ վորաեղից են, շատ եյին ...

—Վանես փափախ կա գլխիդ, ֆրոնտ գնացած զինվոր ել ես ...

—Ինչ ասեմ Իշխանբեկյանների ու Մուքյանց ազգը շուն ա, մի գուցե ...

—Վոչ թե մի գուցե, հենց եղպես ա, միայն աննամուսություն ես արել յեվ տղորցը կատաղած գայլերի ուխին թողնելով փախել, ամոթ ա:

Տղամարդիկ, թե Սեվի ապորը հարգում եք, տըղոցը հարային հասեք, հայ ձեզ ղուրբան ...

—Գնանք ...

Ջախներն այս ու այն կողմից բացականչեցին, ապա տղամարդկանցից շատերը վազեցին դեպի տները:

Այդ պահին կոմունիստ Դանիելը իր յերկհարկանի տան պատուհանից հանգիստ հետեվում եր գյուղում տեղի ունեցող գործողություններին:

* * *

—Վա՛յ իմ Վերդի, բոյիդ ղուրբան բալաջան.— յերեկոյան դեմ գյուղի ներքին թաղից հանկարծ ողբ պատռեց Մաքունց Մանվելի աղիւղորմ ձայնը:

—Բա, ուրեմն խեղճ Վերդուն սպանած են լինելու.—ասաց Վանեսը և վազեց դեպի ներքին թաղը:

Սեվի ապերն ել գնաց:

Յերիտասարդ կոլտնտեսական Վերդու դիակն ընկած եր իրենց տան բակում:

—Վա՛յ բալաս, յես քո արնոտ ջանին ղուրբան Վերդի ջան,—մաղերը քանդելով ու յերեսը չանգոտելով դիւ ձայնով բղավում եր Մանուշակը, վորին պահել չեյին կարողանում:

—Ընկերներ, հանգիստ, քիչ լոցեք.—հրացանները ձեռքներին ճանապարհ բաց անելով, բաղմության միջից դուրս յեկան Սուրենը, Հայ-

լապետը, Սողոմոնը, նախկին պարտիզան Սարգիսը, Սիրանը, Վարսոն...

— Տղերք, ես հւմ գազանությունն ա.— դադանակը կողքին պահ տալով հարցրեց Սեվի ապերը: Դասակարգային թշնամու, կուլակ Իշխանքեկյանների, կուլակ Մաքյունց...

— Բա յես չեյի ասում, այ ժողովուրդ...

— Ընկերներ, սպասեցեք.— ձեռքն ողումը պարելով ասաց Հայրապետը:

Հուզված կոլտնտեսականներն ու մենատնտես գյուղացիները պահ մի լռեցին:

— Ընկերներ, դասակարգային թշնամին դիմադրում ե: Նա թփերի հետեվում թաքնվելով մեկ-մեկ խումբ ե մեր շարքերից մեր աչքով ընկերներին: Կուլակ Իշխանքեկյանները հարեվան գյուղերի խռովարար տարրերի հետ, մեզ հետ հաշվի յեն նստել:

— Ընկերներ.— առաջ գալով ասաց կոմյերիտուհի Սիրանը.— կուլակը պայքարելու յե, պայքարը դեռ ավելի յե ուժեղանում, անշուշտ սա վոչ առաջին դոհն ե, վոչ ել՝ վերջինը: Մեր շարքերից գնացել են Մանվելը, Մահակը, դեռ 1920 թվին, զոհվել են մեր ավագ ընկերներ Արսենը, Արտավազը, Սարգիսը, այժմ ել անվերադարձ գնում ե մեր սիրելի Վերդին: Այդ նշանակում ե արդժ, վոր մենք դիրքերը կթողենք, մենք հետ կնահանջենք, վոչ, ընդհանրապես, մենք կհամախմբենք մեր ուժերը, մենք միասնական ֆրոնտով կհարձակվենք կուլակի-դաս

կարգային թշնամու վրա, դիրքերը լիովին գրավելու, նրան վերջնականապես լիկվիդացիայի յեն թարկելու համար:

Բոլորը լուռ եյին, տասնյակ կրակոտ աչքեր հառվել եյին կարմրաթուշ Սիրանի հուզված դեմքին:

— Սիրան ջան, մենք ել յեկանք, մենք ել ենք գալիս ձեզ հետ միասին կովելու թշնամու դեմ: Բացականչեցին մենատնտեսներ Մաքունց Սաքին Զըթրչունց Սողոմանը, Սուլթին, Շուշանը, Հերիքնազը, Վանեսը...

Մյուս ուր կոլտնտեսականներն ու բոլոր մենատնտես գյուղացիները խմբովին հանդ դուրս յեկան կոլտնտեսության բամբակը քաղելու և մինչև վերջին կնգուղը հավաքելու համար:

Ու եդ որից ել փարթամորեն սկսեց աճել, ամրապնդվել կոլտնտեսությունը:

* * *

Արտը խշշում եր.

Ցորենի յերկարավիզ հասկերը ամրակուռ ձեռքերում չըրչըրթալով միանում, խուրձեր են կազմում, ապա կուտակվելով փանջաքներն իրար հետեվից կազնեցնում:

Հնձվորները տապ առած, առանց կանգ առնելու հունձը շարունակում եյին:

Կոլտնտեսության նախագահ Հայրապետը նայում ե լայնածավալ, խշխշացող արտերին և ուրախությունից հրճվում:

— Գործարք ե հա՛մ, չեն կանգնում, ինքն իրեն մտածեց նախագահը:

— Հայրապետ, տեսնում ես ինչ ենք անում, հունձը շարունակելով ասաց Վանեսը:

— Տեսնում ե ուրախանում եմ Վանես դայի:

— Հա՛, հա՛ կոլլեկտիվի գործերը հաջող են գընում, պիտի ուրախանալ, միջամտեց կոլտընտեսական Վանոն:

Նրանք շարունակում են հունձը, նրանցից ամեն մեկն ել մեծ արագությամբ ջանում են նորման կատարել և առաջ անցնել:

Ու նրանց առաջից արտը փախչում եր:

Ինչ հեռու, տափաստանի վրա բազմել եր կոլտնտեսություն կալսիչ մեքենան և կլանում եր խուրձերը: Նա տնքալով, փոշին ցրում եր շուրջը և ծածկում կոլտնտեսականների զվարթ դեմքերը:

Տրակտորը փնչալով դռում եր և զնդակի առագուլթյամբ պտտեցնում կալսիչ մեքենայի առիվը, իսկ կաշվե փոկը սկսում եր ողում պար գալ: Ցորենը կարմրին տալով կալսիչ մեքենայի հետեվի յերկու անցքից թափվում ե, իսկ կոլտեսականները շտապ-շտապ, նույն մեքենայի արագությամբ, քսակները լցնելով տանում կալի մեջ թափում են:

— Եյ գետի հա՛մ, եսքան խուրձերը կամնով կալսեյինք աշունը, յետեվից վրա կհասներ, ձմեռը խուրձերը կալերում դարսած կմնային, անձրեվը գալով կծաղկեցներ զարգա ցորենը ու մեր յերեխոցը հացը կկտրեր: Կալսիչ մեքենա-

յից բացի կալերն ել ենք աշխատեցնում, վոր մի կերպ հացը հավաքում ենք: Վրա բերավ Սարգիսը:

— Մենակ տրակտորը չե ընկերներ, առայժմ տրակտորի համեմատ պետք ե հարգել և ձիուն, լծկան յեզներին, նրանք դեռ մեզ շատ են ոգնում...

— Ի հարկե, դեռ մեր Ղուճաշն ու Սարգարը լուծից չեն ազատվել, նրանք հարկավոր են, թեկուզ Պողոսը լավ չի պահում, ասաց Սային:

Տրակտորը շարունակ փնչում եր: Կալսիչ մեքենան շարժվում ու խուրձերը կլանում եր: Փոշին տարածվում եր ողում, խուրձերը պար եյին գալիս կոլտնտեսականների ձեռքերում ու ցորենը մի կողմով եր թափվում, իսկ դարմանը՝ մեկ:

— Կոլլեկտիվը շեն մնա, կա՛, ապրուժ ենք: Բացականչեց Սային ու խուրձերը շարտեց դեպի կալսիչ մեքենան:

* * *

— Վերացնում ենք, վերա... ցը... Նո՛ւմ, — յերկար ծոր տալով զանդաղ յերգում եր Սողոն և բամբակի փարթամ կնգուղները կոխ տալով փռչացնում:

— Եդ ում ես բամբակի արտում վերացնում Սողո՛ւ. կողքին բշտելով բացականչեց Սիրանը:

— Վա, Սիրան դու լե՛ս, ուրեմն չգիտե՛ս ում ենք վերացնում: աչքերը գետնին գցելով, կեղծ ամաչկոտությամբ պատասխանեց Սողոն:

— Կուլակին ես՝ վերացնում, թե՛ բամբակին...

— Դե, դե լեզուդ քեզ պահիր, իմ նկատմամբ այդ չպիտի համարձակվես, չգիտես, վոր կուլակ ների դեմ գիշեր ցերեկ հրացանս ձեռքիս կռվել եմ. — սպառնական տոնով պատասխանեց Սողոմն:

— Ռումբն ել մի ձեռքում պինդ բռնած...

— Գնդացիքն ել մեկ...

— Թուրն ել կողկիցը կախած...

Իրար հետեվից բացականչեցին կոմյերիտականները:

Սողոմն ջղայնությունից ատամները կրճտացրեց:

Սատանայական մտքերը կինո ժապավենի պես անցան նրա աչքերի առաջով:

— Տղերք տեսնում եք, խոսելու տեղ չունի այս կուլակի պոչը. — միջամտեց Վարսոն և քաղած բամբակի մեջ ծածկված կանգնեց Սողոմի դիմաց:

Նրա կարմիր թշերը և սեվ ու խոշոր աչքերը սպիտակ բամբակի միջից ծաղրում եյին Սողոմին: Սողոմն ձեռքին մի քիչ բամբակ բռնած քարացել, կանգնել եր Վարսոյի առաջ:

— Դե խոսիր ե, գործով ինչո՞ւ չես ապացուցում, վոր դու պայքարում ես կուսակցության գլխավոր գծի համար, կուլակի պոչ ինչո՞ւ չես յերկու կնգուղ բամբակ քաղում, իսկ տասնյակներով վոտիդ տակին փչացնում. — լուրջ տոնով ավելացրեց Վարսոն:

— Ե՛յ սատանա, հեռու կաց այստեղից, մի

գդալ կնոջ արյան համար չեմ ուզում քեֆիս կպել...

— Հա... հա... հա...

Կոմյերիտականները քահ-քահ սկսեցին ծիծաղել:

— Տղերք կուլակի պոչը արյուն թափելու մասին ե խոսում, վախեցե՞ք, վրա բերավ Արսենը, վոր մինչ այդ լուռ հետեվում եր ընկերների խոսակցությանը:

— Լրբեր, բամբակի դաշտերը պոռնկանոց եք շինել, Սողոմն ձեզ չի քսվում հա, ջղրվել եք. — հրացանի պես պայթեց Սողոմն և քաղած բամբակը գետնին թափելով հեռացավ:

— Ե՛յ, շան լակոտ, կանգնիր. — ողբ պատռելով արձագանքեց մի խրխոտ ձայն. դա նախկին միջակ գյուղացի Սայու ձայնն եր:

Սողոմն չլսեց նրան:

— Կանգնիր, չես լսում, լակոտ...

Բամբակի յերկարավիղ թփերի արանքում նրանք իրար դեմ ծառացան:

— Ծիշտ չեն արել, վոր անունդ կուլակի պոչ են դրել...

Սողոմն չպատասխանեց:

— Բա չե՞ս ամաչում, ամբողջ ուրը յերկու կիլո բամբակ չես հավաքել, յեղածն ել գետնին թափում, փչացնում ես: Փեղնից հետո գործի դուրս յեկողները մինչև հիմա 20-30 կիլո բամբակ են քաղել, բա դու ի՞նչ բանի յես յեղել...

— Քավթառ, գն՛ւ ինչ ես ուզում եք վարտեղից

սովորեցիր քաղաքական տնտեսությունը, վոր այժմ ել ինձ վրա ճառ ես կարդում:

Սային ջղախուժությունից սկսեց դողալ. նրա յերեսի կոշտացած կաշին սկսեց դողող յերակնների վրայով ցատկոտել և աչքերն ակամայից սկսեցին բաց ու հուփ անել:

—Այ, յես քո... շան վորդի. բղավեց Սային և կոշտացած բռունցքը ամուր բռնած ողում պտտեցրեց:

Սողոն հարվածի ուժեղ թափից գլորվեց գետնին և շտապ վեր կացավ ու գլուխը կորցրած փախավ ու թագնվեց բամբակի թփերի մեջ:

—Հա... հա... հա... հա...

—Ամա կպավ հա...

Բացականչեցին կոմյերիտականները: Սային վերադառնալով շարունակեց բամբակը քաղել:

Ու ելի բամբակն սկսեց փախչել հարվածային կոլտնտեսականների առաջից, կնգուղներն սկսեցին վիզները ծռելով խոնհարվել, ապա բամբակը բրեզնտների վրա կուտակվելով սկսեց դեպեր կազմել:

Բամբակի պլանի ցուցանիշները թռչկոտում էին, բամբակաքաղ կոմյերիտականների յերիտասարդ սրտները նման, իսկ բամբակատար սայլերը ճոճուլով գնում էին դեպի ընդունման կայանը:

* * *

Գիշերն իր թեվերը փռել եր ամենուր: Կոլտնտեսականները հանգիստ քուն էյին մտել:

Բայց Մյաքունց Պողոսի տանը դեռ չէին քնել: Լամպի աղոտ լույսն անդոր աստղի պես պսպղում եր տան պատուհանի ապակու միջով,

—Ս... ս... ս...

Շունն ականջները սրելով սկսեց հաջել:

—Հը', հիվ ա—տեղից ցատկելով վազեց պատուհանի մոտ Մյաքունց Պողոսը և աչքերը չռելով նայեց դեպի դուռ:

Մթության մեջ նրա խորամանկ աչքերը վոչ-չինչ չնկատեցին:

Մյաքունց Պողոսը հանկարծակի յեկավ, յերբ տան դուռը շրխկալեն բացվեց և ներս մտավ Սողոն հարբած, ծռվածաբեր:

—Շան վորդի, լեղիս պատառեցիր է՞.—հանդարտ շունչ քաշելով նստեց աթոռի վրա և յերկար բեխերը սկսեց տրորել:

—Վա՛, Պոլոս շան... Պողոս... Դու յեկ ես ինձանից խորշում...

Ծռվածաբերով մոտեցավ նրան Սողոն և վոտները պահել չկարողանալով ընկավ գետնին:

—Եդ վորտեղ լակեցիր, բա չես իմանում, վոր այդպիսով կարող ես խանգարել մեզ.—ականջին փսփսաց Պողոսը:

—Յես նրանց մերը... յես ես աղջկորանցը...

— Մ...ս...ս...

Բացականչեց Պողոսը և ձեռքերով փակեց Սողոյի բերանը ու նստացրեց աթոռներից մեկի վրա:

— Հ'ը, ինչ ե պատահել:

— Թակեցին, Սային կողքս փշրել ե, Պողոս ջան, ասում են կուլակի պոչ... ասում են թըշ-նամի...

— Դե... դե... դե... ելի թուլամորթութուն արի՛ր..

— Ախր... ու յես նրանց.— բռունցքով դար-կեց սեղանին և ելի ծոմառտելով վտտի կանգնեց:

— Դե նստի՛ր տեղդ, սպասիր ողջակը բանամ մի քիչ պառկիր հանգստաց, իսկ հետո կխոսենք:

— Լավ... թո՛ղ... պառկեմ...

Սողոն քաղցր խոմփացնում եր: Ժամերը հո-սում եյին:

Պողոսը նստած սպասում եր, բայց վոչ վոք չեր գալիս:

Հանկարծ դրսում շունը սկսեց հաջել:

Պողոսը տեղից ցատկելով դուրս յեկավ: Բա-կում մի քանի հոգի յերեվացին:

Շունը լուեց և պոչը շարժելով մոտեցավ յե-կողմերին:

Մի քանի հոգի մտան տուն:

Այստեղ ե կոխողի հաշվապահ Տիգրանը, պա-հետապետ Դանիելը:

— Պողոս, շատ ես սպասել.— մի կապոց թուղթ սեղանին դնելով ասաց Տիգրանը:

— Դե մի բաժակ ողի տուր անց կացնեմ, ծարավ եմ.— վրա բերավ Դանիելը:

— Հը, դու ես ասա, պատրաստել վերջա-ցրել եք...

— Հա, հա վերջացավ, վաղը անցնում ենք բերքի բաշխմանը, միամիտ կաց...

Իսկ իմ որակաճների հարցը Տիգրան...

— Շան վորդի դու ողին բեր, որակաճները պատրաստ են, մի 40 որակաճ եստեղից ենտե-ղից ավելացրել եմ քո աշխարհույկում:

— Բա յես քո հոգուն մեռնեմ...

— Հ'ը, քիչ ա շան վորդի.— վրա բերավ Ման-վելը:

— Տո ինչ եմ ասում.— խոսակցության տո-նըն իջեցնելով ասաց Պողոսը և ողու շիշը ձեռքն առավ:

— Վա՛, սա ո՞վ եք բա յես քու, շան լտկոտ.— մոտենալով ձոճոացող թաղթին բացականչեց Դանիելը, ապա բռնեց Սողոյի կողքին:

Սողոն հանկարծ տեղից վեր ցատկեց և սկսեց աչքերը բաց ու խուփ անել:

— Քեֆին կպել են... համ ել գցել ա...

— Ո՞վ...

— Են կոմսոմոլ աղջիկները, Սային ել մի լավ բռունցքահարել ե.

— Հա... հա... հա...

Բոլորն սկսեցին քահ քահ ծիծաղել:

Հ'ը, դուք ել եք ինձ ձեռք գցում...

— Ադա, Սողո ո՞վ ա քեֆիդ կպել.— խորա-

մանկ աչքերը նրա վրա հառելով ասաց պահեստապետ Դանիելը:

— Նրանք, են պոռնիկները...

— Հի... հի... հի...

— Բա չկարողացար մի լավ հուպ տան...

— Բա են շան վորդի Սային թողեց, կողքս փշրել ե.— պատասխանեց Սողոն և աչքերը գետնին գցեց:

— Սային ե խփել, դե վոր աղպես ե դու մի տես, թե յես ինչպես եմ խփելու նրան ե.— բացականչեց հաշվապահ Տիգրանը և թղթերը սեղանի վրա թափելով սկսեց քրքրել:

— Հ'ը, մորթում ես, թե մաշկո՞ւմ.— միջամտեց Պողոսը և մոտեցավ նրան:

— Մորթում եմ, մորթում, այ տես, ես 20 որականը փռավ, անհետացավ, սա Սողոյի հաշվեգրքույկն ընկավ, կողքի հարվածի փոխարեն...

— Հի... հի... հի...

— Հա... հա... հա...

Բոլորն ել փորները բռնած սկսեցին ծիծաղել:

Սողոն նույնպես ծիծաղեց, բայց հանկարծ այդ ըրպեյին նա հիշեց կոմյերիտուհի Սիրանի խոսքերը և մի սարսուռ անցավ նրա ամբողջ մարմնով:

— Դե նստեցեք տեսնենք, ել յերկար խոսելու կարիք չկա.— ասաց հաշվապահ Տիգրանը և նրստեց սեղանի մոտ, ապա ողու բաժակը զլխին քաշեց:

— Հա, հա Տիգրանը ճիշտ ե ասում, վաղն ենքան աշխատանք կա անելո՞ւ.— վրա բերավ պահեստապետ Դանիելը:

Բոլորը նստեցին սեղանի շուրջը:

Պողոսը տան պատուհանից նայեց դուրսը, ապա պինդ ծածկելով մոտեցավ նրանց ու ըսկսեց սեղանը սարքել:

— Տղերք, յես ամեն ինչ դրստել եմ, որականների հաշվառման գործը թան ընկած մուկ ե դառել, մի քանի նարյադ կորցրել եմ, մի քանի գրքույկում սկի որականների անուն չկա:

— Բա բրիգադիրների տված տեղեկությունները, վոր նարյադից բացի գրվում ե իրենց մոտ:

— Եդ ճիշտ ե որականների հաշիվը կուտընտեսականը բոլորից լավ գիտի, մանավանդ են շանվորդի կոմսոմոլ Հայկոն, են մի քանի աղջկերքը ուղղակի աչք են ծակում, աչք, հասկանում եք:

— Բա վո՞նց ես արել.—

— Տնաքանդներ ենքան մաշկելի մարդիկ կան, բա Մյաքունց վանեսն լո՞նչ ե, Ղըթրրչունց Սարգիսը, Բդասանց Թաթին, Սոնանց Բախշին լո՞նչ են, նրանց որականները վոր շփոթել չկարողանամ, բա ո՞ւմը պիտի շփոթեմ: Դե կոլխոզի նախագահի գլուխն ել հաշվապահությունից ենքան աբարոտ չի անում, իսկ Շրջհովարչու-թյունը տարեկան մի անգամ չի գալիս:

— Տիգրան նաղդ խոսիր ե, նաղդ...

— Կարճ ասած, յես արդեն պատրաստել եմ.
— Կամացուկ ասաց Տիգրանը, — բոլորիս որական-
ներն ել ավելացրել եմ մի կերպ, բայց բանը
դրանում չե, յես կարծում եմ վոր հարկավոր ե
բերքաբաշխման առթիվ վաղը հրավիրվող ժողո-
վին հարց դնել, բերքն ըստ շնչի բաժանելու
համար: Մենք բոլորս ել ընտանիքավոր ենք, յե-
րեխաներ շատ ունենք, եղպես մեզ ավելի ողուտ
ե, քան որականներ թոցնհլը, վոր հետագայում
կարող ե բացվի: Յեթե ըստ շնչի անցկաց-
նենք, մյուս որը կանցնենք բերքի բաշխմանը
և մինչև շրջանի մի բան իմանալը բերքն ար-
դեն բաժանված կլինի, վորից հետո վոչինչ
անել չեն կարող:

— Իսկպես, այդ խելքի մոտ բան ա, ամա
վախենում եմ բան չի դուրս գա.— ասաց Դա-
նիելը:

— Ձե, դուրս կգա, մեր կողմից շատ կոտորն-
տեսականներ կլինեն, միայն հարկավոր ե ժողո-
վում դուրս գալ:

— Յերկուսից մեկը, յերկու կողմն ել պատ-
րաստել եմ, վորը կանցնի, կանցնի.— ասաց Տիգ-
րանը:

— Դե լավ մի քիչ գցենք, բերանս չորացել
ե.— բացականչեց Պողոսը և ողու բաժակը վերց-
րեց:

Ու ողու բաժակներն սկսեցին չրխչրխալ ու
շշերը դատարկվել:

Սողոմն լուռ եր և կեր ու խմին չեր մասնակ-
ցում:

Հայրապետը բերքաբաշխման մասին իր զե-
կուցումը վերջացրեց, թե չե տասնյակ կոշտա-
ցած ձեռքեր սկսեցին իրար զարկվել: Մակայն
Մյաքունց թյունին հոնքերը կիտել եր: Թյու-
նին, յերբ նախագահից լսեց վոր մի աշխուրհ
18 գրվանքա ցորեն ե ընկնում, գժվածի պես
իրեն միանգամայն կորցրեց: Նա հաշվում եր իր
13 աշխուրը 10 փութ ցորենից դենը չեր անց-
նում, բայց յերբ համեմատում եր իրեն Սեպի
ապոր, բատրակ Դանիելի հետ, տեսնում եր, վոր
ներանք 150—200 փութ ցորեն են ստանալու ու
գժվում եր:

— Հա, ուրեմն Դանիելը 200 փութ ցորեն
ստանա, իսկ Մյաքունց թյունին քաղցած զկու-
տան... չե, եղ չի լինի, չի լինի...

Այդպես եր մտածում թյունին, յերբ կոլխզի
նախագահը վերջացրեց զեկուցումը:

Նա ցանկացավ ձայն խնդրել, բայց հանկարծ
ծափահարությունը նրան շփոթեցրեց: Թյունին
պահ մի կանգ առավ, բայց յերբ նկատեց, վոր
Պողոսը աչքերով ուտում ե իրեն, ուսկ արավ ու
ձայն խնդրեց:

— Ինձ մի ձայն տաս Սարգիս:

— Խնդրեմ.— պատասխանեց ժողովի նախա-
գահը:

Թյունին մոտեցավ նախագահության սեղա-
նին, կանգ առավ, քիչ մտածեց ու սկսեց խոսել:

— Հա, Հայրապետ ջան եդ շատ լավ ա, վոր մեր նախկին չքավոր գյուղացիք այժմ ունեւոր են դառել, լավ ա և նա, վոր բատրակ Դանիելը մոտ 200 փութ ցորեն պիտի ստանա, բայց... եստեղ մի ուրիշ վախ կա...

— Եդ յես հասկացա Թյունի,—տեղից բացա-կանչեց Սեվի ապերը:

— Ի՞նչ վախ կա, Թյունի...

Ակումբում լուսթյուն տիրեց: Կոլտնտեսա-կանները հարցական տոնով աչքերը հառեցին նրա վրա:

— Յես վախենում եմ, վոր մեր կոլխոզի յե-րեխատեր մարդիկ, անաշխատունակ անդամներ շատ ունեցող տնտեսությունները ձմեռվա կիսին սովի առաջ կանգնեն...

— Հա, եդ ել դուզ ա՛.— շշուկները սկսեցին տարածվել դահլիճում:

— Հետո՞, շարունակիր.— չափազանց սառն տոնով ասաց Հայրապետը:

— Ախր մեր կոլխոզը սոցիալիզմի համար ա պայքարում չե՞ Հայրապետ ջան, բա վոր եղպես ա, վոնց կարելի չա մի կոլխոզնիկին 200 փութ ցորեն տալ, իսկ մյուսին 10 փութ, վոր մեկը բոլ-բոլ ուտի, իսկ մյուսը քաղցած զկուտա ու նրա սփռոցի փշրանքներն ուտի...

— Եդ լողների թագավորին ձայն միք տալ, — ժողովականների միջից բացականչեց տրակ-տորիստ վարդանը:

— Տղերք ախր եդ մարդու ասածի մի դամա-

րը դուզ ա, խի՛ չեք թողնում, վոր խոսի, հենց ինձ վերցրեք, իմ որականներով վեց յերեխաս պահել կարողանալու յեմ.—միջամտեց կոլտնտե-սական Մարգարը:

— Բա հո՞...

— Թյունի ուզում ես, վոր յես աշխատեմ, դու ուտես, հիշում ես, վոր հնձի ժամանակ շատ կերած արջի նման կանաչներում պարկում քնում եյիր. քրտինք չես թափել չես ստանում ելի, ել ումից ես նեղանում.—բարկացավ բրի-գադիր Վոսկանը:

— Լավ, ել ինչի համար եսք կոլտնտեսու-թյուն յեկել, վոր ելի առաջվա նման համ հա-րուստ, համ քյասիք ա լինելու, համ կուշտ, համ քաղցած ա լինելու, եդ հո հավասարություն չդառավ ընկերներ.—վրա բերան Դանիելն ու Պողոսը:

— Սպասեցեք, Թյունի պրծա՛ր.—հարցրեց նախագահը:

— Չենք ուզում, չի՞ հարկավոր, թող ել չխոսի,—բողոքեցին կոլտնտեսականները:

— Ընկերներ սպասեք, հանգիստ,—կոլտնտե-սականներին հանգստացնելով կանգ առավ Հայ-րապետը: Նրա յերեսը շիկնել եր, Չղայնությու-նից դողում եյին ձեռքերը:

— Մի ձայն տուր ընկեր նախագահ... .

— Չե, ինձ տուր...

— Ինձ ել...

— Ինձ ել...

Տասնյակ կոշտացած ձեռքեր ուղղվեցին դեպի նախագահության սեղանը:

Մյաքունց Պողոսի դեմքը խոժոռեց: Թյունին նստել էր առաջին շարքերում ու չիբուխին հուպ տալով ծուխն առատորեն բաց էր թողնում:

— Խոսքը տրվում է Սեվի ապորը:

Ժողովականները լռում են:

Սեվի ապերը տեղից վեր կենալով փափախը կոնատակին է դնում ու յերկար բեխերը քաշելով սկսում.—

— Ընկերներ, ինչպես տեսնում եմ մեր հալալ խեղանի աշխատանքները՝ կեղտոտ մարդիկ ուզում են խանգարել:

Թյունին, Պողոսը, Դանիելը մոռանում են, վոր հիմիկվա տարին լողրի, թամբալի, աշխատանքից փախչողի տարի է, վոր ով աշխատում, նա յեւ ուտում ա: Խի յես ձեր նյոքաւրըն եմ Մյաքունց Պողոս, Թյունի, եդ վաղ երէ, մոռացեք, հիմա տղա յեք մեյդան դուրս յեկեք ու աշխատեցեք: Հա, եդպես ա, հիմա ապորուսան աշխատողինն ա, էք աշխատիլ սոված կզկուտաք:

— Եդ ա հա, ջանմ սան Սեվի ապեր:

Ծիծաղելով վրա բերին կոլտնտեսականները:

— Մի վախիլ, յես քաղցած էմ մնալ.— միջամտեց Թյունին,— կգնամ քաղաք բանվորություն, մշակություն կանեմ ու յերեխորցս պահեմ, յես ինձ համար էմ ասում, այլ այրի Սանամի, Հերիքնաղի, Սաքյունց անաշխատունակ

Սողոյի, Հարությունի համար եմ ասում, վոր չնայած կոլտնտեսական լինելուն քաղցած կոտորվելու յեն...

— Դե բավական է, վերջ տուր ագիտացիայիդ:

— Վարդան մի խանգարիլ, քեզ ձայն էնք տվել...

— Ախր, ընկեր նախագահ փուչիկս տրաքեց...

— Սպասիր...

— Լավ, լսում եմ.— խոնարհվեց տրակառիստ Վարդանը:

— Թյունին ճիշտ է ասում, դուք խիղճ չունեք: Խի յես ել որական չունեմ, յես ել եմ լողր, 319 որականի դիմաց պակաս բերք էմ ստանալու: Բանը դրանում է, յեթե ընկերություն է, մեկը չպիտի քաղցած մնա, իսկ մյուսը՝ կուշտ, հաց ունեցողն ել ընկերին քաղցած տեսնելուց կերածը չի մարսելու, էե, դա ամենեվին կոլտնտեսություն չի դուրս գալիս.— միջամտեց Դանիելը:

— Եդ մեկին յես ել կողմնակից եմ, իսկապիս, վոր ընտանիքավոր շատ տնտեսություն կա, վորոնք ձմեռս քաղցած են մնալու, վրա բերավ հաշվապահ Տիգրանը:

— Սպասեք, ձեզ ձայն տվող չի յեղել, միք խանգարիլ,— բարկացավ Սարգիսը և ձայնը տրվեց Հայրապետին:

— Ընկերներ, ինչպես տեսաք Սեվի ապերը և մի քանի հոգի՝ իրենց բոլշիկյան յեւոյթով

պատասխանեցին թյուճունու և նրա կողմնակիցներին, բայց թույլ տվեք ինձ մի քանի խոսք ասելու.—ասաց Հայրապետը:

— Հն, հն թող յեղբարեակի զեկուցումը:

— Ընկերներ, յես ուզում եմ ավելացնել, վոր բերքի ըստ շնչի բաժանելու թեորիան, կուլակային այդ հավասարանքը գալիս է վոչ թե թյուճունու գլխից, այլ նրա հետևին թագնված մարդկանցից: Մարդիկ, վոր այդպիսով ցանկանում են կազմակերպչատնտեսապես թուլացնել մեր տնտեսությունը, կոլտնտեսությունում գցել աշխատանքային դիսցիպլինան, պլանների համար տարվող պայքարը և նրան կանգնեցնել քայքայման առաջ:

— Ճիշտ է, եղպես ել կն...

— Սկի յեկ չե.—միջամտեց թյուճին.—յես չեմ ուզում, վոր անցյալ տարվա պես մեր կոլտնտեսականներից շատերը քաղցած մնան...

— Ոհո, կոլտնտեսականների դարդը թյուճունու ու մի քանի հոգու ջանն ա մտալ.—հեզնանքով ասաց Սեվի ապերը:

Թյուճին Հպատասխանեց, աչքի տակով նա նայեց Պողոսին, սակայն նրան չնկատեց և գլուխը քարշ գցած նստեց տեղը:

— Յավը նրանումն է ընկերներ, — շարունակեց Հայրապետը, վոր թյուճունու նմաններին տոն տվողը կոմունիստ Դանիելն է, այդ ցավալի լե ընկերներ, շատ...

— Բայց լավ իմացիր, դժբախտաբար Դանիելը հարցին կոմունիստորեն է մոտենում...

— Սխալվում ես Դանիել, դու քո այդ տեսակետով ոգնում ես դասակարգային թշնամուն և հարվածում կոլտնտեսությանը: Դու այդ լավ հասկանում ես իհարկե: Յես այստեղ այդ հարցի շուրջն ավելորդ եմ գտնում յերկար խոսելու, կարծում եմ, վոր հարվածային կոլտնտեսականները չեն թողնիլ, վորպեսզի իրենց քրտինքով ձեռք բերած բերքը ցաք ու ցրիվ անեն և բաժանեն անբանների և լողերների վրա...

— Այո, չենք թողնիլ, վոր բերքն ըստ շնչի բաժանեք, եղ որից ել դուրս ենք գալու կոլտնտեսությունից, — միաբերան պատասխանեցին կոլտնտեսականները:

— Ուրեմն յես քվեարկում եմ, ով ցանկանում է բերքը բաշխել ըստ որականների, թող մատ բարձրացնի, — խոսակցությունները դադարեցնելով ասաց ժողովի նախագահ Նախկին կարմիր պարտիզան Սարգիսը:

Կոլտնտեսականների ձեռքերն ողում ծառացան, բացի հատ ու կենտ մարդկանցից:

Այնուհետև ժողովը շարունակեց իր գործնական աշխատանքները:

* * *

Գյուղական զուռնան զիլ նվագում էր. վարդանը «փուքը պահելով», լայն կուրծքը դեմ տված փչում է զուռնան ու կանչում պարել սի-

բող յերիտասարդներին, իսկ Հայկոն ուժերը հավաքած դարկում ե դհուլին:

Քիչ հետու, մեծ ընկուզենու տակ պատեֆոնը շրաստյան բաց թողած, կլկլացնում ե: Այստեղ, նոր կառուցած ակումբի ծառաշատ այգում պսպղում են ելեքտրական լամպերը և լուսավորում պայծառ ու ժրջան դեմքերը:

Գյուղի յերիտասարդներն ելի կինո և յերեկո եյին կազմակերպել:

Դաշտերից վերադառնում եյին կոլտնտեսականները, շտապով մի բաժակ թեյ խմում, ընթրում և վազում դեպի ակումբ:

— Բռնեցեք, մի թողեք, վոր փախչի.— զուռնան բերանից վերցնելով բացականչեց Վարդանը:

— Արա աժի, աժի՛ր, փախավ...:

Մի խումբ յերիտասարդներ Սիրանի ձեռքից բռնած, քարշ տալով գցեցին ողակի մեջ:

— Դե պարիր...

— Չեմ կարող ընկերներ:

Հրաժարվում եր Սիրանը և աչքերը ման ածում, վոր մի ազատ տեղով փախչի, բայց տղերքն ամուր ողակ բռնած չեյին թողնում դնա:

— Ինձ հետ ե պարելու, ինձ հետ:

Դհուլը ձեռքից տալով բացականչեց Հայկոն ու Սիրանի ձեռքից բռնելով մեջ տեղ բաշեց:

— Շալախն...

— Շալախն...

Ու զուռնան զիլ կանչեց: Իսկ դհուլն սկսեց ընդունել ճիպոտների հարվածները:

— Մաշալա...

— Սաղ ու...

Ծափ եյին տալիս յերիտասարդ կոլտնտեսականները և պարողների հետ շարժում իրենց վոտները:

— Ընկերներ, մեր սեփական ապարատով կինո նկար ե ցուցադրվում.— մի բարակ ձայն սկսեց կանչել:

— Վճրտեղ...

— Մեր ապարատով...

Սկսեցին հարցնել այս ու այն կողմից:

— Ա՛յ, այնտեղ, ընկուզենու տակ: Դպրոցի վարիչն ե ցուցադրում, յերեկ դպրոցը շրջուսբաժնից պրեմիա յե ստացել:

Ուռում...

Հանկարծ ողը թնդաց յերիտասարդներին առողջ սրտներից դուրս յեկող ուժեղ ձայնից:

Նրանք նվազածությունը դադարեցնելով վազեցին դեպի ընկուզենու տակը, ուր մի մեծ կռտավ կապած եր ծառերից:

— Ընկերներ, այսօրվանից ամեն հնգորդակում մեկ անգամ կինո նկար ե ցուցադրվելու մեր կոլտնտեսականներին համար: Այդ ապարատը մեր դպրոցն ե պրեմիա ստացել պոլիտեխնիկացիայի առթիվ կազմակերպված շրջանային կոնկուրսում, մենք վորոշեցինք մինչև յերեկոն

սկսվելը մեր ապարատով մի փոքր կինո նկար ցուցադրել.—բացականչեց դպրոցի վարիչը:

Տասնյակ կոշտացած ձեռքեր ամուր իրար զարկվեցին:

— Կեցցե մեր որինակելի դպրոցը...

Ու շրջանից յեկած մեխանիկը մոտեցավ ապարատին, թե չե կտավի վրա տրակտորների կալոնան կազմ ու պատրաստ դաշտ դուրս յեկավ ցանքան սկսելու համար:

— Տղերք, մեր տրակտորն ել ա ենտեղ, հմ, տեսնում եք.—աչքերը սրբելով ասաց կոլտնտեսական Վոսկանը.—հրեն Վարդանն ել...

— Բա շարքացանն ենտեղ չի,—բացականչեց Վարդանը:

Կոլտնտեսականները սկսեցին քահ-քահ ծիծաղել: Կինո ժապավենը սրնթալով անցնում է ու նկարները փոխվում են:

...Յերկաթուղի... Նոր ճանապարհ, հարյուրավոր բանվորներ թափվել են կիրճի վրա ու ցանկանում են պատռել նրա կուրծքը գնացքի համար ճանապարհ բանալու: Վառվում է ղինամիտը, բանվորներն սկսում են փախչել: Հանկարծ պայթում է կիրճը իր սրտից հսկայական ծանրությամբ քարեր շարժելով:

— Բալադ մեռնի ղինամիտ, տեսաք ա կնանիք,—զարմացած ասաց կոլտնտեսուհի Սոլթին:

— Յանի տեսաք Սոլթի աքեր, կարծում ես, թե բոլշևիկները միայն ալդալիսի կերճեր են պայթեցնում—պատասխանեց դպրոցի վարիչը:

— Հավատում եմ, հավատում եմ կանեն...

— Բնս, կանեն, հենց քո վրա իմացիր ելի, կով չունեիր, հիմա կով ունես, տանդ ելեքտրական լամպ ունես, կինո ապարատ ունես, այո բոլշևիկները ելպես են,—հպարտանալով վրա բերավ կոմյերիտական Հայկուն:

Կինո ապարատը կանդ առավ, թե չե ահումբի զանգը հնչեց:

— Կինո...

— Կինո...

— Կինո նկարն արդեն վերջացել է ընկերներ, մյուս անգամ, այժմ անցնում ենք ահումբ, յերեկոն սկսվում է:

Կոլտնտեսականները լուռ հավաքվում են ահումբ: Չանցած մի րոպե բեմ են դուրս գալիս մի քանի աշակերտներ—խաղում է «Կենդանի լրագիրը»:

Նրանցից ամեն մեկն իր ձեռքում պահում է մի նկար: Այդ նկարների տակ գրված է կոլտնտեսությունից բերեցողությունների անունները, փորտեղ ցույց է տրվում նրանց պլանների կատարման ցուցանիշները:

Առաջին նկարում Սեվի ապերը սավառնակ նստած թուչում է 130 թվանշանը բռնած, յերեկոյն Պոլոնով Վոսկանը ավտո քշելիս, հետեյալը՝ գրնացք, ձի, ավանակ և վերջապես կրիա, փորի վրա նստած է Պոլոսը, 35 թվանշանը կրիայի պոչից կպցրած:

— Սոխեք ես ինչ զոռի բան ա, Սեվի ապե.

ըլ վորտեղ, — Պողոսը վորտեղ, — բացականչեց
Վանեսը:

— Բա յես ավտոմոբիլ եմ քշում, խի իմ մա-
սին չես խոսում, — լուրջ տոնով ասաց Վոսկանը:

— Ախպեր, լավ ես անում, վսր քշում ես,
հո քեզ մի թթու խոսք չասացի, վոր...

— Հն... հն... հն...

Քահ-քահ ծիծաղեցին կոլտնտեսականները:

Աշակերտների արտասանությունը դադարեց-
րեց կողմնակի խոսակցությունները:

Այնտեղ խարաղանվում էյին հետ մնացողներն
ու գործից խռսափողները:

* * *

Դիշեր եր, այնքան մութ, վոր հինգ քայլի
վրա դիմացդ յեկող մարդուն չես կարող նկա-
տել: Դաշտում, կալերի մոտ, նոր պահեստի դռան
առաջ զինվորականի պես հրացանը ձեռքին պինդ
բռնած, կանգնել եր կոլտնտեսության պահակ
Դանիելը:

Յերկու տարի յե, նա իր աչքի լույսի պես
պահում է կոլտնտեսության հաղարավոր փթե-
րով հացահատիկը: Նա լուռ է, բայց լսողություն-
ը լարած հետևում է ամեն մի շշուկի: Հանկարծ
մոտակա կալում փայտի չրթընթոց լսվեց:

Դանիելը տեղից ցատկում է և հրացանը
կրծքին առնում:

— Ո՞վ ես...

Չայն չկա:

— Ե հեյ, ո՞վ կա եդ կալում...

Կրկին ձայն չկա:

Դանիելը գնում է դեպի կալը: Այդ պահին
մեկը պահեստի պատի տակով կուզեկուզ դալիս
ու պահեստի դռան առաջ թափած փայտերի
արանքի մեջ թաղնվում է:

— Ի՞նչ ես անում եստեղ շան վորդի, խի
չես պատասխանում, վոր կանչում եմ. — բղավում
է Դանիելը:

Մթության մեջ նա մի մարդու առաջն արած
դալիս եր դեպի պահեստը: Այդ պահին փայտե-
րի արանքից պսպղացող մի թուր ծանր թափով
իջավ Դանիելի կողքին: Դանիելը տնքալով, ցան-
կացավ հրացանը կրծքին առնել, բայց ձեռքերը
թուլացան և ընկավ գետնին: Թրի յերկրորդ
հարվածն իջավ Դանիելի կրծքին և նախկին
բատրակ Դանիելի արյունն առատորեն հոսեց
պահեստի առաջ:

— Թյոնի, Տիգրան, շուտ արեք, անոթը
բերեք...

Ու յերկու հոգի նավթի անոթը վերցնում են
և կամացուկ մոտենում պահեստի դռանը:

Քիչ հետո վառվում է լուցկին: Չանցած մի
րոպե կրակը յերկինք է բարձրանում ու սկսում
լիզել պահեստի պատերը:

Վառվում են փայտերը, մոտակա դեզը, սա-
կայն լուռ է կոլտնտեսային դաշտը: Ու հանկարծ
գիշերվա անդորրը խանդավեց, հանկարծակի

իկած անասունների բառաջոցին ձորերն սկսեցին արձագանքել:

— Արա հէյ, պահեստն այրվում ե, հրդեհ, հրդեհ ան...

Մի աղիողորմ ձայն ողբ պատռեց: Մեկը ձին նստած խճուղով սլանում ե գետի գլուղը:

Գոմերից դուրս են գալիս անասնապահները, ֆերմայի աշխատակիցները և վազում գետի պահեստ: Կրակն ավելի յեր բարձրանում և սկսում լիզել պահեստի պատերը:

Տրակտորիստ Վարդանը յեկավ, նրա աչքերը յերեկվա դեպքից կարմրել, ուռել ու դուրս ելին գալիս, սակայն նա չշփոթվեց ու վազեց տրակտորը բերելու:

Տրակտորն սկսեց աշխատել պահեստի ու վառվող դեզի շուրջը խրամատների բաց անել: Վարդանն այդ արավ հրդեհից ազատելու ֆերմաներն ու մնացած դեզերը, սակայն պահեստը, չէ՞ վոր այնտեղ այրվելու վրա յե կոլտնտեսականի հացը, կոլտնտեսության սերմը:

— Տղերք յեկանք, ջանք թափեք...

Այդ պահին դիմացի լեռան վրայից լսվեց մի քանի ձայն:

Ու մինչև հինգ րոպեն տասնյակ մարդիկ կանգ առան պահեստի առաջ, վորոնց թվում Հայրապետը, Սեվի ապերը, Հայկոն, Սիրանը, Վանեսը, Սուրբին:

— Տղերք չշփոթվեք, դեռ կրակը ներս չի խուժել...

Հայրապետ ջան ևն անտեր բենզինից եմ վախենում, բենզինից, վոր կրակը հասավ նրան տուներս քանդվելու յե—նախագահին դիմեց Վարդանը:

Հայրապետի դեմքը մռայլվեց: Թուլացան նրա ձեռքերը:

— Ձե, վոչինչ չի լինիլ, շորերով, ջրով, ինչ գնով ել ուզում ե լինիլ, պիտի հանգցնել.—պատասխանեց նա ապա շտապ մոտեցավ պահեստի վառված դռանը: Յերկաթի մի ձող իջավ պահեստի դռանը և կայծերը յերկնքից ընկնող աստղերի նման ցրվեցին ողում:

Այրվող փեղկի տախտակներից մեկը ընկավ:

— Պիտի ներս գնալ.—ասաց Հայրապետը և կաշվե պինջակը գլխին գցելով մոտեցավ դռանը:

— Ադա Հայրապետ կայրվես.—բացականչեց Սեվի ապերը, վոր կացինը ձեռքին քանդում եր պահեստի այրվող աանիքի փայտերը:

— Վոչինչ չի լինի, միամիտ կաց...

Նա դռան փեղկի կողքով ներս մտավ, վառվող մի տախտակ ընկավ գլխին, կրակի լեզուները պինջակի տակից ներս խուժեցին, սակայն Հայրապետն առանց շփոթվելու անցավ ներս:

Ներսից սկսեցին յերկաթե ձողի հարվածները: Իրար հետեից պոկվեցին, պահեստի դռուը բոլորովին քանդվեց:

— Գեհան բենզինի տակառի վրա պիտի դնել Հայրապետ, ներս մտնելով ասաց Վարդանը:

— Վորտեղ ե...

— Գրողը տանի ինչ գիտենամ. — պատասխանեց Վարդանը և շորերը հանելով սկսեց փաթաթել բենդինով լիքը տակառը, ապա ման գալով քեչան գտավ ու տակառը լավ ծածկեց:

— Հիմա ինչ անենք, մթերքները դուրս տանք...

— Ձե, չե՛ս Վարդան հարկավոր ե տանիքի փայտերը քանդել և չթողնել վոր առաստաղն ել բռնի, բարձրանանք տանիքը:

Ու իրար հետևից պահեստի տանիքի վառված փայտերը քանդվում էյին կացնի հարվածների տակ և ներքեվ թափվում: Կրակը կամացկամաց հետ նահանջեց, դեզն ել այրվել վերջացել եր, խրամատները չեյին թողնում, վոր կրակըն անցնի մյուս դեղերին:

Պրծանք, ապրեցինք տղերք ջան, հաղթեցինք թշնամուն, — տանիքից իջնելով ասաց Սեվի ապերը:

— Իսկ վաղն ել կբռնենք զազազած թշնամուն, միամիտ կաց չենք թողնի պահեստի ու Դանիելի վրա ձեռք բարձրացնող թշնամին աղատ ման գա. — պատասխանեց Հայրապետը:

— Տղերք, ինչո՞ւ մոռացել եք, իսկ Դանիելը վորտեղ ե. — սթափված ասաց Վարդանը: Բոլորը մնացին անշարժ կանգնած:

— Բայց նա, յեթե վողջ լիներ, չեր թողնի, վոր պահեստը վառեյին. — տխուր տոնով պատասխանեց Սեվի ապերը:

Ու սկսեցին ման գալ:

Դանիելին չգտան:

Բայց, լերը լույսն սկսեց բացվել, կոտնտեսականներից մի քանի հոգի նկատեցին շուրջը փռված արյունը:

Վարդանն արյան հետքերին հետևելով գնաց դեպի կալը:

— Այստեղ ե, Դանիելն այլևս վողջ չե...

Կոտնտեսականներն այդ լսելուց վազեցին դեպի կալը և գլխները խոնարհեցին իրենց սիրելի ընկերոջ դիակի առաջ:

Նրանց թվում եր, թե Դանիելը ունեւոր կյանք վայելելով, սովորականին պես ժպտում ե, հանաքներ անում, սակայն արյունը սառել եր նրա կրծքի վրա:

Այդ պահին գյուղի մոտից մի գիլ ձայն լսվեց. —

— Տղերք, Մյաքունց Պողոսի, թյունու և Ճղարանց Տիգրանի գործն ե այդ, ես գիշեր ներքին հանդում Յականը բռնել ե նրանց, հիմա գյուղումն եմ...

Տղորց ատամները կրճտացին, ձեռքներն ալամայից սկսեցին դողալ:

Ու ձիերն սկսեցին ասպանդակել դեպի գյուղ: Արևն ել սովորականին պես սկսեց ժպտալ յերկրնքից:

* * *

Կուսրջիջի քարտուղար Սարգիսը մի կապոց թուղթ վերցրած, յերեկոյան դեմ շրջանից յեկած մի յերիտասարդի հետ մտավ գյուղխորհուր-

դի գրասենյակը: Թղթերը սեղանի վրա գրավ,
գրպանից հանեց ծխախոտի տուփը, լուցկին վա-
ռելով կպցրեց ծխախոտը և աթոռի վրա նըս-
տեց ու սկսեց քրքրել թղթերը:

Գյուղի կուսակցականները շտապ-շտապ հա-
վաքվեցին ժողովի: Մենյակում սկսեց բարձրա-
նալ ծխախոտի առատ ծուխը:

— Սկսե՛նք չե՞ տղերք—դանդաղորեն բարձրա-
նալով ասաց Սարգիսը:

— Հա՛, սկսե՛նք, միայն Վարդանն է բացա-
կայում, են ել «Զովի» հողամասումն է—պատաս-
խանեց Վոսկանը:

— Ուրեմն ընկերներ, Վարդաշատ գյուղի կուս-
քջիջի դռնփակ ժողովը համարում են բացված:
Որակարգում դրված է յերկու հարց: Յերու կու-
լակային տնտեսություն յերկու հանելու և մեր
կուսակցականներից յերկու հոգու այդ դասակար-
գային թշնամիներին իրենց թեփի տակ առնելու
և պաշտպանելու հարցը:

— Դեմ չենք...

— Ուրեմն, ընկերներ այդ առթիվ խոսքը
տրվում է Հայրապետին:

Հայրապետը դրպանից մի փոքրիկ գրքույկ
հանելով մոտենում է սեղանին:

— Ընկերներ, ինչպես գիտեք, դեռ մի քանի
տարի առաջ այսպիսի մի դռնփակ ժողովում մի
շարք կուլակների յերևան հանեցինք, վորոնց
թվումն էր նաև Ստեփան Իշխանբեկյանը: Այդ
առթիվ դեմ չեյին և նրա բարեկամ Սողոմն ու

Դանիելը. նրանք նույնպես ձեռք բարձրացրին
և մեզ հետ վորոշեցին, վոր կուլակ են,—սա-
կայն... նրանք հետագայում ոգնեցին այդ կու-
լակին թագնվելու համար և նրա ունեցվածքը
թագցնելով ցաք ու ցրիվ արին:

— Ելի՛, դե բավական է, բա չպրծանք—բա-
ցականչեցին Սողոմն ու Դանիելը:

— Տնաքանդ, մինչ կուլակի գույքը աճուրդ
նշանակելը, նրա յերկու տակառ ցորենը թագ-
ցրել էս, քո քրոջ հացը «չկտրելու» համար
իրերը տարել տունդ, ել դրանից ավել ինչ էս
ուղում—պատասխանեց Հայկոն:

— Զրպարտություն է, յես իմ քրոջ ոժիտն
եմ տարել:

— Այնուամենայնիվ դրա համար դու Դա-
նիելի հետ կուսգծով խիստ նկատողության ես
արժանացել:

— Ե՛յ, լակոտ, քրոջդ արյունը քաղցր եր
հա՛, բա 1919 թվին Իշխանբեկյանի արյունոտ
ձեռքով ընկած կոմունիստների արյունը քաղցր
չէր: Իշխանբեկյանը դեռ վաղուց կուլակաթափ
յեղած պետք եր լինեք, քեզ նմա՛ «կուսակցա-
կան» բարեկամ ունենալու պատճառով բավակա-
նին ձգձգվեց:

— Նոր բան ասիր, նոր...

— Դե թող վոր ասեմ ելի՛—շարունակեց Հայ-
րապետը—հինն ասում եմ, վորպեսզի կապեմ
նորի հետ, վոր ապացուցած լինեմ ձեր անուղ-
ղելի լինելը:

— Ոհո...

— Բաժական ե վերջապես, կարգի յիմ հրավիրում, — միջամտեց նախագահը:

— Ինչպես տեսնում եք ընկերներ, այդ մարդիկ չեն ուղղվում: Այժմ նրանք կոլտնտեսություններ խցկված կուլակներ — Պողոսի, Տիգրանի հետ, նրանց հյու-հպատակը դառած, ներսից քայքայում են կոլտնտեսություններ և կոլտնտեսականներին արյուն քրտինքով ձեռք բերած մթերքները կրակին մատնողներին աջակցում...

— Սաւո ե...

— Նրանց հետ միասին շարունակ խմող, հարբեցողը մենք չենք Դանիել, իզուր ես բողոքում: Դու քո ոպորտունիստական թեորիայով պաշտպանում եյիր կուլակային հավասարանքը և ժողովում պահանջում, վոր բերքը բաժանենք ըստ շնչի: Ովքեր եյին քո պաշտպաններն այնտեղ, պահեստը վառող, կոլտնտեսականի մատաղ կյանքը դանակի մի հարվածով խլող Պողոսը, Տիգրանը, Թյունին, չէ... Պատիվ ունեմ հայտնելու ձեզ, վոր մեր սիրելի Հայկոյի ղեկավարությունամբ կոմյերիտմիություն թեթեվ հեծելազորը քո պաշտպանած Պողոսի տանը հենց մի քանի ժամ առաջ մոտ 200 փուլից ցորեն և 80 փուլ թաղցրած գարի յե գտել, իսկ նախկին հաշվաւոր Տիգրանի տանը 7000 ուտլի կանխիկ փող և քո պահած պահեստից գողացված 120 զույգ տրեխի կաշի...

— Յերբ...

— Իհարկե, դարմանալի վոչինչ չկա, պարզ ե, վոր քո մատնել յայնտեղ խառն ե, իսկ Սոդոն յերեւիլի քիչ լպտած կլինի — պատասխանեց Հայկոն:

— Յես դեռ չեմ հաշվում նա, վոր կոլխոգներիների որականները հաշվետար Տիգրանի միջոցով խառնել եք ու հարվածային կոլտնտեսականներին աշխուրները ձեռ հաշվին գրել:

— Դե բավական ե, ի՞նչ ե, սե յեզն ընկել ե, հիմա դանակավորները շատացել են, — բղավեց Դանիելը:

— Դե ասա, ի՞նչ կասես դրան:

— Այստեղ յիս ձեզ վոչինչ չեմ ցանկանում ասել և ավելորդ եմ գտնում այդ մասին խոսելը, կգնամ շրջանում կասեմ:

— Ընկեր նախագահ, ինձ մի ձայն, յեթե կարելի յե — խնդրեց շրջանից յեկած յերիտասարդը:

— Խնդրեմ:

— Ընկերներ, ղեկուցողի բերած փաստերը, մեղադրվողների բացատրություն տալուց հրաժարվելը, կրկին անգամ գալիս են ապացուցելու, վոր ձեռ կոլխոգն աղոտոված ե դասակարգային խորթ տարրերով: Յես անհրաժեշտ եմ գտնում այստեղ մատնանշել մեր կուսակցության առաջնորդ ընկ. Սալիկի խոսքերը ներկա կուլակների և նրանց մեքենայությունների մասին, վոր մեղանից վոչվոք այդ չպիտի մոռանա: Անա թե ինչ ե ասել նա, «Ներկա կուլակներն ու յենթա-

կուլակները, ներկա հակախորհրդային տարրերը—գրանք մեծ մասամբ «հանգարտ», «անուշ», գրեթե «սուրբ» մարդիկ են։ Նրանց չպետք է վերոնել կոլխոզից հեռու։ Նրանք նստած են հենց կոլխոզի մեջ և այնտեղ վարում են պահեստապետի, տնտեսութեան վարիչներին, հաշվետարներին, քարտուղարների պաշտոն և այլն։ Նրանք յերեք չեն ասի, «թող կորչեն կոլխոզները» նրանք կոլխոզի «կողմն» են։ Բայց կոլխոզում այնպիսի սաքոտաժային ու ֆեասարարական աշխատանք են տանում, վոր կոլխոզները խիստ ֆեասվում են։ Այգեպիսի ճարպիկ թշնամուն նշմարելու և դեմագոգիայի անձնատուր չլինելու համար պետք է ունենալ հեղափոխական զգոնություն, պետք է ընդունակություն ունենալ պատռելու թշնամու դիմակը և ցույց տալու կոլխոզիկներին այդ խակական հակահեղափոխական դեմքը»։

Ահա գրանք, ձեր դիմաց նստածները, ձեր պահեստն այրող, կոլխոզի ունեցվածքը հափշտակողները. յես վորպես շրջանի ներկայացուցիչ ավելորդ եմ գտնում նման չափազանց պարզ հարցի մասին յերկար չխոսել և գտնում եմ, վոր պետք է կազմակերպչական խիստ յեղրակացություն անել։ Յես վերջացնում եմ։

Լուռ են տղերքը

Թվում է, թե կուսըջիջն արդեն իր վորոշումը հանեց։

— Հը, ի՞նչ կասեք հիմա, այդ ել շրջանի խոսքը...

— Դե վոր դուռի տեղ է, շան վորդիք ինչ ուզում եք վորոշեցեք.—պատասխանեցին Դանիելը ու Սողոն և դեմոնստրատիվ կերպով դուրս յեկան։

— Հը, չդիմացաք, կուլակի պոչեր, հիմա յել սպառնում եք.—բարկացավ Հայկոն։

Հանգիստ, տղերք, թող դուրս դան.—միջամետեց Հայրապետը։

— Տղերք, կարծում եմ, վոր այլևս յերկար խոսելու կարիք չկա, հարկավոր է յերկուսին ել կուսակցությունից հեռացնել—ասաց Սարգիսը։

— Ծիշտ է, այլ յեղրակցություն անել չի կարելի—պատասխանեց շրջանից յեկած ընկերը։

— Ուրեմն ով համաձայն է, թող մատ բարձրացնի։ Բոլորի ձեռքերը ողում ծառացան։

Միաձայն։

Նրանց կոշտացած ձեռքերը դեռ ողում ցըցված էյին, յերբ դրսից ծկլթաց ատրճանակը։

— Տա... տա...

Դյուղխորհրդի գրասենյակի պատուհանի ապակիները չըթչըթացին և ատրճանակից արձակվող յերկու գնդակ անվրեպ կպան Սարգսի կրծքին։

— Տղերք յես ել... թշնամին... հազիվ կոկորդը սեղմելով մրմնջաց Սարգիսը և թուլացած ընկավ գետնին։

Տղերքը շտապ դուրս յեկան։ Ատրճանակներն սկսեցին շարժվել և պսպղալ ելեքտրական լույսի տակ։ Դրսում վոչ վոք չկար։

Յերկու հոգի մոտեցան արյունաշաղախ Սարգսին և բարձրացրին դրին փոստաթղթերով ծածկված սեղանի վրա:

Սարգիսն աչքերը գլուխը գցած ձեռքն ուղղեց դեպի շրջանից յեկած ընկերոջը և Հայրապետին, ցանկացավ խոսել, սակայն նրա կոկորդըն ավելի սեղմեց խոսքերը, նախկին կարմիր պարտիզանը փոքրիկ յերեխայի պես բլբլաց ու ու անշարժ ընկավ:

Սենյակում մնացած աղերքը գլխները խոնարհեցին նրա առաջ:

— Տա...

— Տա... տա...

— Տա... տա... տա...

Այդ պահին գեղամիջում սկսեցին աշխատել ատրճառակներն ու հրացանները:

Պայքարը շարունակվում էր:

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԸ

Գիշերվա ուղիղ ժամը 2-ին հեռագիրը հաղորդեց հոյակապ քաղաքը պաշտպանող սակավաթիվ կարմիր մարտիկներին,—

— Արյան գնով քաղաքը պաշտպանել: Առավոտյան ժամը 7-ին ոգնության ե հասնում ձեզ Պ գունդը:

Ռազմահեղափոխական Խորհրդից:
1920 թիվ:

* * *

Լուսադեմ:

Քաղաքը տագնապի մեջ էր:

Մի կիլոմետր հեռավորությունից թշնամու հրետանին աշխատում էր:

Շրագնեկները հռնդալով յերկնքից իջնում և քանդում էին քաղաքի հոյակապ տները, իսկ քաղաքի արեվելյան մասում հրացաններն ու գնդացիները ծվծվում էին:

Մարդիկ խորհրդավոր լուծթյամբ փողոցներով վազվզում էին: Նրանցից վոմանք տխրում էին, վոմանք ուրախանում, վոմանք էլ պսպղացող հրացանները մաքրում և պատրաստվում մարտի:

Հրետանին անընդհատ աշխատում էր, իսկ հրացաններն ու գնդացիրները ծվծվում էին:

Արսենալի հսկողութեան համար մնացած Կարմիր քանակայինները հավաքվել էին մեծ սրահը: Նրանք հեծելազորի մարտիկներին էին:

Նրանց խորհրդավոր դեմքերը արտահայտում էին անհաջողութեան նշաններ:

Վերջին վաշտը, վոր մնացել էր քաղաքի ներսում կարգ պաշտպանելու համար, նույնպես փրոնտ ճանապարհվեց:

— Պատրմատ...

Հնչեց հուզված հրամանատարի խրոխտ ձայնը և սպիտակ ձիուն ասպանդակելով, — հեծելազորի առաջն ընկավ:

Ձին առյուծի պես մոնչաց, առաջի յերկու վտոր բարձրացնելով ոգում ծարս յեկավ և առաջ վազեց:

Նրան հետևեցին Կարմիր մարտիկները և սրահը բոլորակապես դատարկվեց:

Սպիտակները շրջապատել էին քաղաքը և սպառնում էին կարմիրներին իրենց հրոսակա խմբերով սրի չենթարկել:

* * *

Պետկա, Պետ. — ատրճանակը մի ձեռքում, իսկ կաստիլը՝ մեկ, վտոր մի կերպ շարժելով, զինվորական հաշմանդամ Սերյոժկան մոտեցավ իր քնած ընկերոջ մահճակալին:

Նրանք յերկուսով նոր էին փրոնտում վերա-

վորվել: Պետկան առողջացել և արհեստական վոտ էր հագել, իսկ Սերյոժկայի վերքը դեռ լիովին չէր առողջացել:

— Պետկա, Պետ. — ջղախուլ թյուռնից դողալով Սերյոժկան կաստիլով խփեց ընկերոջը:

— Տո, ապուշ, խաղալու ժամանակ ես գտեմ. — պատասխանեց Պետկան և վերմակի մեջ ամուր վաթաթվելով աչքերը պինդ փակեց:

— Պետ, սպիտակները յեկան... սպիտակները յեկան...

— Ի՞նչ, ո՞վ ասաց, — տեղից ցատկելով, Պետկան մի վոտով կանգնեց մահճակալի վրա և մեկանուտ ձեռքերով վերցրեց պատից կախած հրացանը, վոր հաշմանդամ դառնալուց հետո յեկ ձեռքիցը չէր տվել:

— Հը, վախեցա՞ր. — ժպտալով ասաց Սերյոժկան:

— Չէ, դե ասա, ի՞նչ նորություն կա, մերոնք չեկան, — հորանջելով ասաց Պետկան:

— Դրությունը վատ է, սպիտակները մոտենում են, արսենալի պաշտպանութեան համար մնացած վերջին հեծելազորն էլ ճանապարհվեց փրոնտ, այժմ քաղաքում դուք չկա:

— Ո՞վ ասաց, բա գեշերվա հեռագիրը, ուրեմն...

— Դեռ յերեք ժամ կա, յեթե այդ մի քանի ժամն էլ մերոնք կարողանան փրոնտը պաշտպանել, Ո՞ր դուռը կհասնի:

— Ուրեմն, Ռազմահեղափոխական Նորհուրդը ժամերը հաշվի չի առել։ Խնչ ես ասում...

— Եյ, հիմար ձախորդություն,— ատամները կրճտացնելով մաղերն սկսեց պոկել Սերյոժան։— յես հավատում եմ... Ա՜ գունդը կգա...

— Իսկ գնալուց մեզ վոչինչ չհայտնեցին, վաղուց է՞ վոր գնացել էն...

— Ամեն ինչ ասացին, կմեռնեն, վոր քաղաքը ձեռքից չեն տալ։ Իսկ թե յերբ գնացին ա՜յ տես, դեռ խճուղու վրա բարձրացած փողին չի հեռացել։— ցույց տալով պատասխանեց Սերյոժական։

* * *

— Բո՛ւմ, բո՛ւմ, դ՛ըր... ը՛ւ...

Հրետանին սկսեց գործել արսենալի ուղղությամբ։

— Բո՛ւմ... բո՛ւմ...

Շրապնեխները ողբ պատուելով լողում էյին յերկնքում։

— Տովարիշչի, ընկերներ հավաքենք մեր վերջին ուժերը և պաշտպանենք արսենալը։— հրացանի բլից բռնած բացականչեց Պետկան։ Դահլիճը յերկար արձագանքեց Պետկայի ձայնին։ հաշմանդամներն իրենց կրակոտ աչքերն ուղղեցին Պետկային։

— Ինչպե՛ս պաշտպանենք,— մահճակալից իջնելով ասաց յերկու վոտից զրկված Տիմոֆեյը, վորի աչքերը կրակի պես վառվում էյին, իսկ մկանուտ ձեռքերը գողում։

— Այ այսպես,— հրացանը նշան առնելով պատասխանեց Պետկան։

— Հիշանալի՜ միտք — վրա բերեցին Սերյոժական ու Սահակը։

— Բայց վճրտեղ, գնանք արսենալը...

— Չէ, հենց այստեղից, պատշգամբից, սենյակների պատուհաններից։ Արսենալը մեղանից մոտիկ և ու վենք ինչքան ուղեք կա... Չէ՛ վոր մինչ յերկու ժամը միտքն օգնության պիտի հասնեն։

— Յեկավ, համաձայն ենք,— պատասխանեց Սահակը և սեղմեց Պետկայի ձեռքը։

— Յեթե հաղթվելու յենք, մեռնենք մեր ընկերների հետ միասին ու այնուհետև թշնամու բանակը թող անցնի մեր դիակներին վրայով, յեկեք հատարենք Ռազմահեղափոխական Նորհուրդի հրամանը, ընկերներ։— վրա բերավ Սերյոժական։

Նրա շրթունքն իրը դողում էյին և աչքերը ակամայից կկոցում։

— Յերեք պալատում, կային 103 հաշմանդամ. բոլորն ել հավաքվել էյին Ա՜ 1 պալատը։ Նրանցից միայն իննը հոգի բոլորովին զրկված էյին կովելու ընդունակութունից բայց նույնպես համաձայնվեցին պաշտպանել արսենալը։

— Ընկերներ, 94 հոգի ընդունակ չենք վաղելու, բայց ավելի բնդունակ ենք կովելու, 94 հրացան պիտի պայթի թշնամու վրա, քիչ չե...

— Այո՛, 94-կան գնդակները շարունակ կը պայթեն շեշտակի մինչև Ա՜ գունդի հասնելը,

չէ՞ Պետկա ջան.— ավելացրեց Տիմոֆեյը:

— Այո, այդպես:

— Յես մշակ կդառնամ ինչքան զենք ցանկանաք կրերեմ արսենալից, միայն թե կովենք, — միջամտեց չարաճճի Վանյան, վորի աջ ձեռքի յերեք մատը չկար:

— Դե, անցնենք գործի և ֆրոնտը ձեղքելու դեպքում պաշտպանենք արսենալը: Պետկան մի քսան հոգու հետ շտապ իջավ դեպի բակը և զնաց արսենալ: Կես ժամվա ընթացքում հաշմանդամները տան պատշգամբը և սենյակները լցվեց փամփուշտի արկղներով, ուռբերով և զնդացիրներով:

Կովի սովոր մարտիկները պատրաստ սպասում էին թշնամու հարձակմանը:

* * *

— Բո՛ւմ... բո՛ւմ... բո՛ւմ...

— Տա՛... տա՛... տա՛... տա՛...

Դեռ հրետանին աշխատում էր, իսկ զնդացիրները ձվձվում էին:

Պետկան ու Սերյոժկան դիտում էին քաղաքը, հաշմանդամների տան չորրորդ հարկից:

Քաղաքում սկսեցին զինվորական մարդիկ յերեկվալ, նորից սկսեց բարձրանալ ձիերի սմբակները դոփուռնը ու նորից սայլերը ճոճաացին:

— Գալիս են, ընկերներ, պատրաստ կացեք, ձեռքներից չալիտի տանք արսենալը.— բացականչեց Պետկան:

— Տա՛...

— Տա՛... տա՛... տա՛...

Փորձված ձեռքերում սկսեցին պար գալ հրացանները:

Հոյակապ շենքի տառնյակ պատուհաններից և պատշգամբներից սկսեցին ծկլթալ հրացաններն ու զնդացիրները:

Փամփշտակները իրար յետևից դատարկվում էին:

Սերյոժկան կաստիլի վրա հենվելով նշան էր բռնում:

Պետկան պռկել էր պատշգամբում և զնդացիրը գործի գցել:

Վանյան շարունակ փամփուշտները թափում էր կրակոդ ընկերների մոտ:

Յեվ այդպես փամփուշտները շալակին մերթ դեպի սենյակներն էր վազում, մերթ՝ պատշգամբը:

Ձորամասը, վոր հանդարտ գալիս էր դեպի արսենալը հանկարծակի յեկած ցրվեց և խուճապի մատնված հետ դառավ:

Հաշմանդամները առանց դադար առնելու կը բախում էին: Կոխվե շարունակվում էր ու հրացանները պար էին գալիս:

— Ժամը քանի՞սն է, Վանկա.—

Քրտինքը ճակտից սրբելով բացականչեց Պետյան:

— Կես ժամ է մնացել, միամիտ կաց.— շարունակենք կրակել...

— Կրակեցեք տղիւք, կրակեցեք. — ուրախացած բացականչեց Սերյոժկան և ուռմբը նետեց փողոց:

Փողոցում ուռմբը պայթեց և ախանջ խլացնելու պես արձագանքեց,

* * *

— Շրճիւկ...

Շրապնելի մի կտոր ողջ պատուելով դարկվեց հաշմանդամներէ տան պատշգամբին, վորտեղ Պետկան պարկել և գնդացիին աշխատեցնում էր:

— Շան վորդէ՛ք. — լավեց մի կցկոտոր ձայն և գնդացիւրը դադարեց կրակելուց:

— Պետկա... Պետ... այդ ինչ յեղալ քեզ, վիրավորեցի՞ն. — իրեն կորցնելով բացականչեց Սերյոժկան: Պահ մի կրակոցները դադար առան և տիրեց խորին լռություն:

— Ընկերներ Պետկան... Պետկան ընկաւ...

— Վոնչ, դեռ Պետկան վողջ է, սխալվել են. — պատասխանեց Պետկան և մեծ զփվարութեամբ կանգնեց մի վոտի վրա:

Նրա արհեստական վոտը ծնկից պոկվել էր շրապնելի հարվածից:

Հա... հա... հա... հա...

Հաշմանդամների ծիծաղը յերկինք բարձրացաւ, յերբ նկատեցին Պետկայի «վիրավորված» վոտը:

— Վոր այդպես է, նման վոտեր շատ կճաբենք, վոնչինչ. — փամփուշտները շալակից թափելով ասաց Վանյան:

— Նո՛ւ, վոնչ մի հապաղում ընկերներ, շարունակե՛ք կրակել... պատասխանեց Պետկան և մոտեցաւ գնդացիիին: Ու նորից սկսեցին հրացանները պար դալ փորձված ձեռքերում, նորից հաշմանդամների տան հոյակապ շէնքը սկսեց վիրավորված առյուծի պես մռնչալ:

Քաղաքից դուրս կռիվը շարունակվում էր: Հրացաններն ու դնդացիները ուժգին թափով դործում էին:

Քանի գնում կրակոցների ձայները մոտենում էին և արձագանքում պատերի խուլ արանքներիում:

Թշնամին չէր յերևում:

— Բնւմ... բնւմ... բնւմ...

Քաղաքի արեւմտյան մասից սկսեցին աշխատել թնդանոթները:

№ գունդը տալիս էր իր ազդանշանը:

— Յեկան, ընկերներ յեկան. — մի վոտի վրա ցատկոտելով բացականչեց Պետկան:

Բոլոր հաշմանդամները դուրս յեկան փողոցի վրա գտնվող պատշգամբները:

Կարմիր հեծելազորը արշավում էր դեպի քաղաքի արեւելյան մասը՝ կարմիրներին ողնելու համար:

Հետեակ գունդը քաղաքի չորս կողմով շուրջ պար բռնած հարձակվում էր թշնամու վրա:

Թշնամու հրետանին լռել էր: Նրանք նահանջում էին:

Հաշմանդամները Պետկայի և Սերյոժկայի

գլխավորութեամբ հրացաններն ու կարմիր դրոշակները ձեռքներին ընդունեցին ոգնութեան հասնող № գնդի կարմիր բանակայիներին:

Նորից քաղաքում սկսեցին ծածանվել կարմիր դրոշակները: Նորից փողոցներում բարձրացավ ձիերի սմբակների դուրյունը և ելի սայլերը սկսեցին ճոճուալ:

Վ Ր Ե Փ

Ամառային դով յերեկո յեր: Քամին վազում եր ծառերի կանաչ տերեւների արանքով և սուլիլով առաջ անցնում:

Այգու մի անկյունում, ուր տիրն եր տեղավորված, կանաչ ծառի տակ գտնվող յերկար նստարանի վրա նստած եր հասակավոր բանվոր Մաթեն, վորին շրջապատել էին մի խումբ յերիտասարդ բանվորներ և հարց ու փորձ էին անում անցյալից:

Մաթեն հասակն առած բանվոր եր. ճակատին մի ընկույզի չափ ավելացած միս կար, վորը Սիբիրի բանտումն էին նշան արել, նրա բանտարկված ժամանակը: Նրա յերեսի կնճիռները, կորացած մեջքը, կոշտացած ձեռքերը վրկայում էին, վոր նա դառն անցյալ ունեցող մարդ է: Նրա մասին շատ էին խոսում: Նրան հարգում էին, վորպես մեծ ընկերոջ: Այժմ նրա շուրջը հավաքված յերիտասարդ բանվորներն ստիպում էին նրան պատմել ճակատի «դամղալի» պատմութիւնը:

Մաթե ապերը կամաց-կամաց, զրպանից հանելով մեծ թաշկինակը, յերկար բեխերը քաշեց, հազաց կոկորդը մաքրելով ու սկսեց.

— Դե՛ լա՛վ, վոր եղպես ճակատիս «գամզան» ձեղ հետաքրքրում ե, կպատմեմ՝ սպասեցեք:

Յերխտասարդներն ալիւլի՝ յեն սեղմվում իրար, մոտենալով Մաթե ապորը:

— Եղպես յեղալ, տղերք ջան, վոր են ժամանակվա ինձ նման անվորձ նախըջին, վորը դեռ աշխարհիս խեղն ու շառը չէր իմանում, հանկարծ տասը տարով բանտարկության դատապարտվեց և են ել Սիբիրի խորքերում, հսկւմ բանտերի նեղ կամերաներում իր ցերիտասարդ հասակն անցկացրեց:

Յես ութ տարեկան՝ հասակից սկսել եմ նախըջուլթյուն անել: Սովորել եյի հանդերին: Վոր մի որ չեյի ման գալիս են ձորերում, են քչքչող պաղ աղբյուրներն ու կանաչադարձ արոտները տեսնում և կանաչ խոտերի արանքում պառկում ու մաճնի փրթուշ ուտում, կամ սրինգը ձեռքիս կլկլացնում և վոչխարների հոտն ու նախիրը սարերն անում, — սիրտս ճաքում եր:

Տասը տարեկան հասակում ընկերանում եմ մեր գյուղում աչքի ընկնող հարուստ մուլքատեր, Սարգիսենց Հայրապետի նյոքար Բաղդուն հետ:

Յերկուսս ել մի հասակի տղաներ եյինք, յերկուսով ել ուրիշի մալ պահելիս և անբախտ չքավորների դավակներ, վոր մի կերպ կարողանում եյինք ապրել:

Տարիների ընկերությունը շատ եր մեզ մտերիմ դարձրել:

Յերկուսով միասին եյինք հանդ դուրս գալիս, միասին խաղում, պարում և նվագում. տանից ել ինչ ուտելեղեններ վոր բերում եյինք, միասին եյինք ուտում. իմ ու քոնը չկար, վոչ յես եյի թագցնում նրանից, վոչ ել ինքը ինձանից:

Մեկ ել կտեսնեյի մեշուկը բաց արավ և ձեռքում ինչ վոր րան թագցնելով հանեց ու ասաց...

— Մաթե, բերանդ բաց արա, մի լավ բան եմ տալու քեզ:

Յես ել, մորը սովորած ճնճողկի ճտի պես բերանս բաց եյի անում, նա ձեռքը մեկնում եր դեպի ինձ ու մի կտոր բան գցում բերանս և ծիծաղից թուլանում:

Այնուհետև յերբ զգում եյի քաղցրությունը, իմանում եյի վոր կոնֆետ ե:

Նա յերբեմն քաղցրեղեն եր բերում ու միասին ուտում եյինք: Նրա մեծ յեղբայրը քաղաքում բանվորություն եր անում և ամեն ոռճիկ ստանալով քաղցրեղեն եր ուղարկում Բաղդուն համար:

Տղերք ջան, յես ու Բաղդին իննը տարի շարունակ քաղցր ընկերություն արինք. ենպես վոր մեկս մյուսների համար կյանքներս չեյինք խնայի: Յեթե լսում եր, վոր հարևան գյուղի նախրապանները յեկել են կովի և ինքն ել ինձ հետ չէր լինում, վորտեղ վոր լինեք կտեսնենք թանչոց տալով, զոռբա դադանակն ուսին դրած դուրս կպրճներ, թե. «հը, եղ ի՞նչ կա, ո՞վ ա համարձակվել մեր տղորցը քեֆին կպչի»:

Շատ դռնադ տղա յեր. սկի չեր վախենում, ով ուզում է իր գիմաց կանգնած լինի:

* * *

Մի գարնան օր, կեսօրից անց նախիրն արել ենք մոտակա կանաչադաբդ արոտներն, իսկ բոլորս հավաքվել այսպես կոչված «Զուլի Դուզը» և չլինդի (մահակախաղ) ելինք խաղում:

Յես ու Բաղդին մի քանի ընկերներով մի խումբ էլինք կազմել, իսկ մնացածը՝ մի խումբ:

Տղերք ջան, ենքան խաղացրինք դրանց, ենքան խաղացրինք, վոր բոլորն ել թուլացած էլին դադանակի յետևից վազում, վորպեսզի յետ բերեն:

Վոր «հուլուլ» էլի ասում ու դադանակը շրպրտում, գնում եր մի հիսուն սաթենաչափ, հիմա յեմ եսպես պտուպել, են ժամանակն ուր, հիմա ուր... հառաչեց Մաթեն:

Հա, խաղի են ամենատաք ժամանակը տեսնեմ իմ Պիծ-ապաս վորսի հրացանը գցած ուսին յերկու նապաստակ, մի քանի կաշավ և զանազան թռչուններ շալակած՝ վորսից է գալիս:

Դա մեծ յեղբայրս եր, տանը նրան Պիծ-ապա էլինք ասում, վորովհետև հորս մեռնելուց հետո տան հոգսը նա յեր քաշում և մեր ընտանիքում մեծը նա յեր:

Լավ վորս անող եր. զինվորութուն արած, ենպես եր նշան բռնում, վոր նրա ձեռքից վորսը շատ զգվար եր աղաափում:

Յերբ Պիծ-ապաս յերնաց, մենք խաղը դադարեցրինք և զարմացած մնացինք նայելիս վորսած թռչուններին, վոր հաղիվ եր շալակած բերում:

Յես վազեցի դեպի յեղբայրս և նրան ոգնեւով՝ շալակը վերցրի. իսկ ինքը ցուցամատով քրտինքը՝ ճակատից սրբեց և կաթիլ-կաթիլ գետնին թափելով՝ հրացանը վերցրեց ուսից, դրավ կանաչ խոտի վրա, գլխարկը վերցրեց ու նստեց:

Բոլորս շրջապատել էլինք և նախանձում էլինք Պիծ-ապայիս, վորովհետև մենք ել հրացան հունելինք, վորպեսզի նրա պես վորս անելինք:

Պիծ-ապաս քիչ հանգստացավ, հետո դանակը հանեց դրպանից, քսեց չախմախի քարին և նապաստակից մեկը վերցնելով սկսեց մաշկել, հետո մեկ ել պատվիրեց, վոր փայտ հավաքենք ու կրակ անենք:

Տղերքը վազեցին ցախ հավաքելու. Բաղդին կուրան վերցրավ ու գնաց աղբյուրից ջուր բերավ, միսը լվանալու համար, իսկ յես դանակը վերցրի ու մտա մոտակա անտառը, տասը հատ ճիպոտ կտրեցի շամփուրի պես պատրաստելով, բերի, վոր միսը խորովենք:

Կրակը վառել էլինք, ամին ինչ պատրաստել և միսը խորովում էլինք:

Հետո բոլորիս պայուսակները սփռոցի պես դցեցինք գետնին և ինչքան հաց ու պանիր ունեինք՝ թափեցինք վրան:

Պիծ-ապաս շատ հանաքներ անող մարդ եր, հացի վրա ենքան ծիծաղեցրեց բոլորիս, վոր բո-

լորս ել թուլացած՝ չեյինք կարողանում խորովածից ուտել, իսկ ինքն առանց ծիծաղելու ուտում եր:

Եղ ժամանակ Բաղդին վերցնում և իմ Պիծապուհ հրացանը և սկսում ձեռքում խաղացնել: Մենք ուշադրութուն չեյինք դարձնում դրան և շարունակ ծիծաղում եյինք. հզ տնաքանդի տղա Բաղդին, հրացանի լեզուն չիմանալով, բարձրացնում և և բռնում կրուշոկից. ու... տըղերք ջան, հանկարծ հրացանը պայթեց և կռավ Պիծապուս գլխին...

Նեղձ յեղբայրս «վա՛յ, բալաս» կանչեց ու ընկավ. բոլորս ել մնացինք սառած փայտի պես կանգնած ու նայելիս նրան, վոր կծկվում եր ու խրխուղում:

Բաղդին վախից կուչ եր յեկել: Նրա յերեսի գուշը բոլորովին փախել եր: Յերք նա տեսավ յեղբորս բոյովը մեկ ընկած, վախից «վա՛յ, վա՛յ...» անելով փախավ դեպի անտառը. նրան հետևեցին մնացած նախրապանները, իսկ նախիւրըն ել խրտնած սկսեց ցրվել, կարծես մի բան հասկանալով. յես ել աչքերս թրջած, դողդողալով ընկնում եմ Պիծապուս վրա և «Պիծապա, Պիծապա» կանչելով լաց լինում, բայց նա չեր կարողանում պատասխանել ինձ և կծկվում եր ու ձեռները գետնին խփում:

Անտեր հրացանի դրման ցրիվ եր տվել յերեսի մի մասն ու գլխի կաշին մաշկել:

Ինձ թվում եր, թե եղ բոլորը յերազ եր, ու

վախեցած, վոտերս դողալով վեր կացա և մենմենակ լաց լինելով, նախիրը թողի ու վազեցի դեպի գյուղ, տանը հայտնելու:

Անտեր լուրն անթել հեռազրի պես մի ըոպելում հասել եր գյուղ: Յերք գյուղին մոտեցա, տեսնեմ պառավ մայրս, յեղբորս կինն ու մեր բարեկամները լաց ու շիվանը գցած վազելով գալիս եյին դեպի հանդ:

Մայրս ինձ տեսնելուց, իսկույն մազերը ցրեց. «վա՛յ բալաս» կանչելով, յերեսն սկսեց ձանկըրտել և քայլերն ավելի արագացնել: Բոլորն ել բղավում եյին և հայհոյում Բաղդուն, «Բաղդի՛, մուրադդ սրտումդ մնա», «աստված գլխիդ քարեր թափի՛»:

Այդպես հասանք այնտեղ—ուր քիչ առաջ ծիծաղելով խոսում ու ճաշում եյինք:

Յեղբայրս արդեն մեռել եր:

Կանայք շրջապատեցին դիակը և սկսեցին լաց լինել, իսկ տղամարդիկ կանգնել եյին և շվարած հարցնում՝ «եղ վո՞նց պատահեց, ինչպե՞ս յեղավ...»:

Տղամարդիկ, վորոնց մեջն եր և Բաղդու պառավ հայրը, վերցնում են դիակն ու ձեռքերի վրա բերում գյուղ:

Յես ել նախիրը թողած նրանց հետ յեկա. ո՛վ եր մտածում այդ վայրկյանին, թե նախիրը կմտնի ուրիշի արտը և կփչացնի:

Յերեկոյան ընկերներս նախիրը բերում են, իսկ Բաղդին վախից գյուղ չի գալիս:

Յես շատ եյի մտածում նրա համար, վորովհետեւ գիտեյի, վոր դիտամբ չի արել:

Մյուս որը յեղբորս թաղելու համար պատրաստություն ենք տեսնում, մեր վերջին աջառն եւ մորթում ու մի լավ պատարագ կատարում:

Յերեք որից հետո, յես ելի նախիրը հավաքում եմ ու տանում հանդ: Պետք ե աշխատեյի, վորովհետեւ մեր ընտանիքի հոգսը ինձ վրա յեր ընկել: Այդպես, գալիս եյի տուն, տեսնում լաց լինելիս, գնում հանդ՝ ժամերս տխուր եր անցնում: Մի հորյեղբայր ունեյի, ունեոր մարդ եր: Գյուղում մի քանի բատրակ եր բանեցնում և բավականին հարստություն ունեւ, վերջապես մեր գյուղը պաշտոնյա գալուց միշտ նրա տանն եր գիշերում. եղպես մարդ եր, լավ ծանոթություն ունեւ կառավարութեան մարդկանց հետ:

Ամեն յերեկո գալիս եյի՝ տեսնում մորս մոտ նստած սովորեցնում ե՝ չհաշտվես «թող դատի տանք և նրանց ունեցվածքից ստանանք ձեզ տանք, տեսնում եմ, վոր սրանից հետո ձեզ ողնող չի լինելու»:

Եզ մարդը, վոր մինչև այդ մեր դռնովը չիւր մտնում, հիմա ենպես համոզեց մորս, վոր ել ամենեկին ինձ չեր լսում, յերը ուղղում եյի խոսել հաշտութեան մասին:

Տղերք ջան, սրտումս նախանձ ասած բանը գոյութիւն չունեւ. կոխի կանեյի ընկերներիս հետ, կձեռնեյինք իրար և ելի մի քանի ըրպեյից

հետո, կհաշտվեյինք. եղպես ել Բաղդու հետ եյի, վորովհետեւ զգում եյի, վոր նա անմեղ ե:

Բաղդի տեղն ել չեյի իմանում. վո՛չ նրա ծնողներն եյին ասում, վո՛չ՝ ընկերներս:

Գլխներդ ինչ ցավացնեմ, դեպքը պատահելուց յոթ ուր հետո, նախիրը քշած գյուղ եյի վերադառնում:

Լայն ճանապարհն ընկած գալիս եյի, վորի յերկու կողմերն ել այգիներով ու պտղատու ծառերով պատած եյին. հանկարծ տեսնեմ մեկը կողքի այգուց դուրս յեկավ և դեպի ինձ վազեց: Լավ նայեցի մոտիկանալուց ու տեսա, վոր Բաղդին եր:

Նա վիզը ծռած մոտս կանգնեց, թե՛

— Մաթե ջան, յես մեղավոր չեմ, հո գիտես: Լսել եմ, վոր իմ հետեից ման են գալիս բռնել տալու համար. բա մեր Խոքան տարվա ընկերութիւնն ել վիրտեղ մնաց. — ել չկարողացավ խոսել և սկսեց լաց լինել:

Սիրտս մղկտաց, ել ինձ չկարողացա պահել, յես ել լաց յեղա և գրկախառնվեցի նրա հետ:

Այդպես մի քանի ըրպե մնացինք, հետո յես նրան առաջարկեցի, վոր գնանք գյուղ, բայց ինչպես յերևում եր, ինձ չեր հավատում և վախենում եր, ու հրաժարվեց, թե՛

— Չե՛, Մաթե ջան, վախենում եմ. յեթե ինձ սիրում ես, գնա և ձեր տանը համոզիր բոլորին, քո հորյեղբորը, վոր դու ել գիտես, մեզ հետ վաղուց թշնամութիւն ունի, այդպիսի մի

բանի յե սպասում: Գյուղի մեծերն միջոցով հաշտեցրու.—խոսքը վերջացնելով առանց կանգ առնելու մտավ այդին ու անհետացավ:

Նախիրը բավականին հեռացել էր ու հասել գյուղին. աչքերս սրբեցի և վաղեվազ հասա նախիրին:

Տեսնելով մօրս՝ տրամադրությունը, առանց խոսելու տրեխներս հանեցի ու տան անկյունում ընկած կարպետի վրա պառկեցի և սոված-ծարավ քնեցի:

Հորեղբայրս այնպես էր հալել ու մօրս գլուխըն ածել, վոր չեյի կարողանում Բաղդիի հետ հաշտվելու մասին խոսել: Հին աղաթի մարդիկ էյին, անպատճառ ուզում էյին «արյունն արյունով վալ»:

Բաղդիի ծնողներն ամեն բան խոստանում էյին տալ վորդեսզի վերջ դնեն բոլոր խոսակցություններին, բայց հաստագրուի հորեղբայրս չէր թողնում. ասում էր՝ «յեթե դուք հաշտվեք, յես իմ յեղբոր վորդու վրեժը պիտի հանեմ»: Յեվ այդպես ձգձգվեց հաշտվելու հարցը. հորեղբայրս ինձանից ծածուկ գնաց քաղաք և մի պրիստավի ու յերկու ստրաժնիկի հետ յեկավ գյուղ:

Պրիստավը դալիս է գյուղացիներին հավաքում գրասենյակ և մեկ մեկ սկսում հարց ու փորձ անել:

Շունչս կտրված մոտեցա գրասենյակին: Պրիստավը հազած էր կապույտ մահուղի պինջակ

վոսկեզույն կոճակներով: Յերկարավիշ կոշիկները հալին, թուրն ու ատրճառակը կապած, խռպոտ ձայնով քննություն էր կատարում:

Հորեղբայրս նրա մի կողմին էր կանգնել, իսկ գյուղի քյոխվան դեղին պայտի պես մեղալը կրծքին կպցրած՝ մյուս կողքին սարթ շների պես պատրաստ սպասում էյին թե պրիստավն ինչ պիտի ասի, վոր կատարեն:

Արդեն բանը-բանից անցել էր. մոտեցա հորեղբորս և ասեցի, վոր հաշտեցնի բոլորին, բայց նա ինձ վրա բարկացավ, թե «կորի, քեզ բան չունես հատեղ»:

Այդ բոպեյին տեսնեմ հարայ-հրոցն ընկավ. բոլորը յես բաշվեցին, իսկ յերկու ստրաժնիկ խուզուց Զոփուս նյոքարի հետ Բաղդու ձեռքերը յետևին կապած բերին: Ինչպես հետո պարզվեց. Զոփուսն էր ցույց տվել Բաղդու տեղը:

Բերին և պրիստավի դիմաց կանգնեցրին նրան ու չթողեցին, վոր ծնողներն անգամ մոտենան: Խեղճ տղան մեռելի յեր նմանվում, գուշը բոլորովին փոխվել էր և հույսը կտրել:

Նա նայեց ինձ, նայեց և կակաղելով ասաց.— Մաթե, բա յես մեղավոր եմ, չե՞ վոր դու ես ինձ մոտ էյիր, ինչո՞ւ յես լուր».— և սկսեց լաց լինել:

Իսկ պրիստավը մտրակով սկսեց հարվածել նրա մեջքին, գլխին...

Յես ու մայրս ելի շատ աղաչեցինք քյոխվին ու հորեղբորս, վոր պրիստավի միջոցով գործը

հաշտությամբ վերջացնեն, բայց վրէժնէ չհաջող-
վեց, վորովհետեւ ինչպէս հետո իմացա, հորչակդ-
բայրս պրիստավին կաշառք եր խոստացել, վոր
գործը դատի տա և բավականին փող պահանջի
ու մի խոսքով Բաղդունց տունը քանդի: Հին
թշնամության պատճառով ուզում եր վրեժը հա-
նել:

Բաղդի մայրն ել լաց եր լինում, մաղերը
քանդում, բայց թույլ չեյին տալիս, վոր մոտենա
իր դավակին. գյուղի կանայք ել հավաքվել
եյին և հեռվից նայում եյին, վորոնց մեջն եր,
նաեւ իմ հավանած աղջիկը: .

Տղերը ջան, սիրտս ուզում եր տրաքվի, ջղա-
յնությունիցս աչքերս սկսեցին ուռնել, գլուխս
պտտվել. դողդողալով մոտեցա հորչեղբորս ու
նորից խնդրեցի, վոր մի կերպ անի ու Բաղդուն
ազատել տա:

Նա ինձ վրա բարկացաւ և շրճիս մի ապտակ
հասցրեց: Են հասակի տղա եյի, դեռ մինչև եդ
որը մեկը չեր համարձակվել, վոր ինձ եղպես
ապտակի. Պիծ-ապաս ել թեկուզ ինձ շատ եր
ծեծել, բայց եղպիսի ապտակ սկի չեր տվել:

Ապտակն ստանալուց կատաղեցի, հետո տեսա
Բաղդուն դիմացս վիզը ծռած ու կանգնած, սպա-
սում եր իր բախտի վորոշմանը. ել ինձ պահել
չկարողացա, դադանակս ձեռքիս պինդ բռնած
մոտեցա պրիստավին, վոր խնդրեմ: Հենց եդ ժա-
մանակ նա աչքով արավ ստրաժնիկներին, վոր
Բաղդուն տանեն: Դրա վրա յես ավելի բարկա-

ցա, գյուղացիներն ել չեյին համարձակվում խո-
սել, իսկ շատերն ել վախենալուց գնացել եյին
իրենց տները:

Վաղելով ստրաժնիկների առաջը կտրեցի:
Խնդրեցի, վոր ազատեն Բաղդուն: Հայտնեցի,
վոր յես սպանվածի յեղբայրն եմ և ներում եմ:
Բայց ո՞վ եր ինձ լսողը, սկի ել չեյին ճանաչում
ինձ և հանկարծ ստրաժնիկներից մեկի մտրակը
ականջիս վրայով մեջքս դաղեց: Բայց ո՞վ կհե-
ռանա, մահս կարծես թե աչքիս առաջն եյի առել,
ճիշտն ասած, չեյի ուզում Բաղդուն բաժանվել,
յեղբորս մահանալն ինձ վրա այնքան չեր ազ-
դել, ինչքան վոր Բաղդուն բանտարկելը:

Յերբ տեսան վոր չեմ հեռանում և ցանկա-
նում եմ Բաղդու ձեռքի կապերն արձակել, սկսե-
ցին բոլորն ել մտրակով այս ու այն կողմից հար-
վածել ինձ:

Յես ուզողակի կատաղեցի, ել յերկար ու բա-
րակ չմտածեցի, գժվածի պես դադանակս բար-
ձրացրի, վորի հաստ քթին մեխեր եր ամրաց-
րած և հասցրի դիմացս կանգնած ստրաժնիկի
գլխին:

Նա ոսկրեն մրթմրթաց և գլխից բռնելով ըն-
կալ դեմին: Գյուղացիների մեջ իրարանցում
ընկալ. պրիստավն սկսեց գոռալ, մի քանի մարդ
ջրջապատեցին ստրաժնիկին ջուր հասցնելով, իսկ
հորչեղբայրս ու քյոխվան հարձակվեցին. վրաս,
վոր բռնեն. յես ել արդեն գիտեյի թե, ինչ պիտի

Մի ժամ այդտեղ մնացինք կանգնած, չիմանալով ինչի համար. հավաքվեցին մի խումբ ստրամփիկներ, բոլորն ել լավ-լավ ձիերի վրա նստած և հրամայեցին, վոր ճանապարհվենք մոտակա խճուղով:

Այդտեղ հասկացանք վոր մեզ տանում են ուրիշ քաղաք:

Այդպես վոտով յերեք որ, սոված-ծարավ, ծեծվելով ճանապարհ գնացինք, իրանք ձիու վրա նստած մեզ մտրակում էյին թե՛ «գնացեք, չի կարելի հանգստանալ»...

Վերջապես հասանք կայարան: Առաջին անգամն էյի վագոն տեսնում, տղերք ջան. ենպես էյի զարմացել, ենպես աչքերս չառած նայում էյի շոգեկառքին, վոր բոլոր ցավերս մոռացած ու ել չէյի մտածում:

Բայց եղ վայրկյանին հիշեցի Հայկուշիս և Բաղդուս, վորովհետեւ յերբ գլուղում հավաքվում էյինք և իրար հետ խոսում, միշտ յերեւակայական վագոնների մասին էյինք խոսում և յերազում էյինք մի անգամ յերկաթուղի տեսնել ու հանգստանալ...

Չանցած մի ժամ, վագոնները կանգնեցրին և մեզ համար առանձին բնտի պես շինած վագոններում տեղավորեցին:

Վագոնի մեջ մեկը յերգում եր, մյուսը՝ լաց լինում. մեկելն ել բղավում մեզ ուղեկցող զինվորների վրա, — ենպես վոր բոլորս ել ձեռք էյինք քաշել մեր կյանքից, ել չէյինք վախենում:

Եղ վագոններով յոթն որ ճանապարհ գնացինք. վերջին որվա յերեկոյան դեմ մեզ իջեցրին մի հսկա քաղաքում և վոտով ել բավակա-նին տանելով մի հսկա շենքի մոտ կանգնեցրին: — Դա Միբրիի քաղաքներից մեկի բանտն եր. շատ էյի լսել գլուղում Միբրիի մասին, — հիմա յեկա ու իմ աչքերով տեսա:

Մեզ տեղավորեցին այդտեղ, հենց այդտեղ ել հայտնեցին ինձ, վոր տասը տարի բանտում պիտի նստեմ:

Ի՞նչ պիտի անէյի, որենքն իրենց ձեռքին եր, նրանց համար ի՞նչ կա, թող չլինի մի հոտաղ Մաթե:

Նստեղ բերում էյին այն մարդկանց, վորոնք յերկար տարիներով են բանտարկվում, վորոնց հանցագործությունը ծանր ե, բերում էյին և հեղափոխական մարդկանց:

Բայց, տղերք ջան, պիտի ասեմ, վոր մեզ շատ վատ դրության մեջ էյին պահում: Առանց հանգստի միշտ աշխատեցնում էյին, ենպես ել մի կերպուղի չէյին տալիս, վոր մարդ ուտեր կշտա, նար ու սկսեր աշխատել:

Ռեժիմը շատ խիստ եր այստեղ, ծեծը, հայհոյանքը անպակաս եր, չէյին խնայում վոչ վոքի:

Յես այդտեղ շուտով ընկերներ ձարեցի, բայց դրանք ինձ պես անխելքություն չէյին արել և բանտ ընդիլ. նրանք այս որվա Մավետի համար աշխատելու պատճառով էյին բանտ նստել և նրանք այնքան տոկուն կամքի տեր էյին, այն-

քան ըմբոստ: Բանտի մեջ ել ելին աշխատում,
կապ ունեյին դրսի աշխարհի հետ, աշխատում
եյին բանտում բանտարկյալների մեջ ու նրանց
ել հեղափոխում—եդ բոլորը նրանք անում եյին
աշխատանքի ժամանակ, իսկ բանտի հսկիչներն
ել շան պէս եյին հասկանում նրանց:

Արդեն յես հասկանում եյի նրանց, գիտեյի թե
մարդիկ ինչու համար եյին կոպում:

Մեր մեջ մի հասակավոր բանտարկյալ կար
վորին բոլորն ել «Պապաշա» եյին ասում, դա մի
ոռւս ընկեր եր, ըմբոստ, վորին բանտի հսկիչ-
ներն անգամ համարձակ չեյին կարողանում խո-
սեցնել: Բոլորս ել գիտեյինք, վոր նա հեղափո-
խական աշխատանք տանելու համար եր բան-
տարկվել, այդ պատճառով ել նրան հարգում
եյինք:

Մի ուր, չեմ հիշում ինչ վոր տոն ուր եր,
բանտարկյալներն ազատ եյին թողել վոր բա-
կում զբոսնենք,

Բոլորս հավաքվել եյինք փոքրիկ այգու շուրջը
և Պապաշային շրջապատել ու քաղցր խոսում
եյինք, իսկ մեզ հակում եյին զինվորները մի տա-
սը քայլ հեռու նստած մեզանից:

Եդ վայրկյանին տեսնենք բանտապետն ու
մի զինվորական մտան բակը: Բանտարկյալները
ճանաչում եյին նրան, յես եյի անփորձը, չեյի
ճանաչում, վոր նահանգապետը յեկել եր տեսնե-
լու, թե ինչ դրութեան մեջ ե բանտը:

Բոլորն իսկույն նրա բակը մտնելուց տեղնե-

րիցը վեր կացան և զլխարկները հանեցին, յես
ևս հետվեցի նրանց, իսկ մեր Պապաշան առանց
շարժվելու իր տեղը մնաց նստած: Նահանգա-
պետն աչքերը պտտեց բոլորի վրա ու հանկարծ
նկատեց Պապաշային, վոր վեր չեր կացել:

Նահանգապետն ինչ վոր բան փսփոսաց բան-
տապետի ականջին և մոտեցավ Պապաշային:

Պապաշան տեղից վեր չկացավ:
Նահանգապետն ավելի բարկացավ դրա վրա ու
մի աքացի հասցնելով գոռաց.

— Ծերուկ շուն, ինչո՞ւ չես տեղիցդ շարժվում:

Պապաշան առանց վրդովվելու տեղիցը վեր
կացավ, զլխարկը գետնից վերցրեց և ասաց,—

— Անատամ գաղան, կատարեցի՞ հրամանդ,
ինչո՞ւ չեք թողնում, վոր բանտումն ել հանգստա-
նանք,— և կրակոտ աչքերը հոռեց նրա վրա:

Նահանգապետը կատաղեց ու մտրակով սկսեց
հարվածել նրան:

Այդ վարկյանին իրարանցում ընկալ բանտար-
կյալների մեջ, բոլորն ել ուզում եյին այդ գա-
ղանից հանել իրենց վոխը: Ու հանկարծ բան
տարկյալները թափվեցին նահանգապետի վրա,
աղատեցին Պապաշային և սկսեցին ծեծել թե
նահանգապետին և թե բանտապետին, իսկ հսկող
զինվորներն ել նկատելով բանտարկյալների
տրամադրութունը փախան:

Բանտի շփոթները զիլ հնչեցին, իսկ վերեւ
մնացած բանտարկյալները սկսեցին հայհոյել
բանտի հսկիչներին, նահանգապետի հասցեյին:

Բանտապետն ու նահանգապետը մի կերպ դուրս պրծան բանտարկյալների ձեռքից, իսկ բանտարկյալները դրանից հետո քաշվեցին իրենց կամերաները:

Բանտում պահ մի ազատութուն եր տիրում, բայց չանցած մի ժամ, յերկու զինվորական վաշտ կանգնեցին բանտի բակում:

Բանտապետն ու մի քանի սպաներ ման եյին գալիս կամերաներում և աչքի ընկնող բանտարկյալներին բակ դուրս բերում:

Յես նայում եյի կամերայի պատուհանից, դուրս եյին բերել Պապաշային և մոտ քսան հոգու. նրանց բոլորի ձեռքներն ու վտակները յերկաթե ողակներ զցեցին և տարան:

Ել դրանից հետո յես չտեսա Պապաշային, իսկ բանտում ուժիմն ավելի խստացավ:

Հենց եդ յերեկոյան, մի քանի զինվորներ ինձ իմ կամերայից դուրս բերին և տարան բանտի ներքևի հարկը:

Յես ու յես մտածում եյի. մի գուցե ինձ ևս կասկածում են հեղափոխական աշխատանք տա-նելու համար:

Բայց չե՛ տեսնեմ մեկը մոտեցավ ինձ ձեռքերս կապեց և մոտեցնելով մեծ սյունին, մի քանի անգամ պարանը փաթաթեց մարմնովս ու պինդ կապեց, ենպես վոր շարժվելու հնարավորութուն չկար. ինչքան ել կապելու ժամանակ հրհրեցի և ցանկացա կապը քանդել, բայց չկարողացա, իրանք մի քանի հոգի եյին, յես՝ մեկը:

Յես կարծեցի թե դրանք ինձ բերել են այդտեղ գնդակահարելու համար, բայց յերբ նկատեցի մի դոգնոցավոր մարդու, վորի ակնոցը նստել եր յերկար ու կարմիր քթի ծայրին, մի շիկացած ողակ յերկաթով բռնած դեպի ինձ և գալիս իսկույն հասկացա, վոր նշան պիտի խփեն:

Նա ինձ մոտենալուց, աչքով արավ կողքին կանգնած զինվորներին. նրանք իսկույն բռնեցին գլուխս, վոր չշարժվեմ:

Ակնոցավորը հանկարծ շիկացրած ողակը կըպցրեց ճակատիս, յես խիստ ցավից սկսեցի բղավել, բայց սրիկաները սովոր եյին այդպիսի բղավոցի, գլուխս պինդ բռնել եյին և բաց չեյին թողնում:

Մի բոպհաչափ պահելուց հետո ակնոցավորը վերցրեց ողակը և բաց թողեց, հեռանալիս մի լավ կում անելով «թո՛ւ» արի ու թքեցի նրա յեբսին:

Նա գոռաց և վրտները գետնին խփելով, մոտն ընկած ճիպոտը վերցրեց և սկսեց խփել գլխիս, յերեսիս մինչև վոր ուշաթափվեցի . . .

Յերբ ուշքի, յեմ գալիս, տեսնում եմ, վոր իմ կամերայում ընկած եմ և խիստ ցավ զգալով, ձեռքս տանում եմ դեպի ճակատս, — ճակատիս վրա մի ընկույզի չափ ուռուցք կար. մոտեցեցի վոր կանցնի, բայց հիմա տասնյակ տարիներ ե անցել ելի նույն դամդան ե — դա կըթված, կուլտուրական սպաների և նահանգապետի հրամանն եր, վոր կովին մասնակցող և Պապաշային

ողնող բանտաբլիզներին դամղա պիտի խփել, վորպեսզի նրանք հետագայում ել յերբ ազատվեն բանտից մշտապես հասարակութունից առնարզվեն, վորպես վտճրագործներ:

Ահա իմ ճակատի նշանի պատմութիւնը տրդերք ջան, վոր Նիկոլից ստացա:

Ուշներդ մեր ուղղիչ տներին չգնա, այստեղ հանցագործին դաստիարակում են, իսկ այնտեղ՝ տանջում, դադում, սպանում:

— Իսկ ինչպե՞ս յեղավ, տասը տարի նստեցի՞ր, — միջամտեցին յերկտասարդները:

— Այո, տղերք ջան, իմ ազատվելուց կարծեմ յերկու տարի անցավ, վորից հետո հեղափոխութիւն ընկավ և են գյոռբագյոռ Նիկոլի հախիցը յեկան:

— Բա Մաթե-ապեր, քո ընկեր Բաղդին ի՞նչ դառավ, ել չի մացա՞ր. միջամտեց մի յերկտասարդ:

— Ել նրան տեսնել չկարողացա. նա ինձանից հետո բանտում հիվանդանում և և վախճանվում: Յես ու նա իզուր տեղը փչանում ենք, իմ հոր յեղբոր և քյոխվի պատճառով: Յերբ յես ազատվեցի մորս վողջ չգտա. մեր բոլոր հողերին տեր եր կանգնել հորյեղբայրս և Բաղդունց տունն ել քանդել տվել:

Ե՛հ, որենք ասած բանը չկար են ժամանակներում. յիթե ունևոր ես և կեղծալոր, իրավունքըն ել եր քոնը, խոսքն ել, դատարանն ել:

Ազատվելուց հետո յի գյուղ չգնացի, մտա գործարան և աշխատեցի, եստեղ վրեժ ասած

բանը գոյութիւն չուներ— վրեժը միայն դասակարգային կռիւ մեջ եր:

— Բնա տղերք ջան, յես եղպես որեր եմ քաշել, դուշմանս անդամ այդպիսի որեր չքաշի.— վերջացրեց Մաթե-ապերը և գլանակը վառելով ծուխը մի լավ ներս քաշեց և ելի վոլոր-մոլոր բաց թողեց ողում:

1931 թիվ.

ԴԻՆԱՄԻՏԸ

Տրակտորը փնջալով պատուռւմ ե յերկրի ճա-
կատը թողնելով իր հետեւից սև ու խոր կնճիո-
ւներ:

Կոլխոզնիկները յերգում, ձայնակցում են
տրակտորին:

Նրանցից քիչ դենը, յեղներին «հո, հո» անե-
լով վար են անում մենատնտես գյուղացիները:

Յերբ տրակտորը նրանց հողամասերի կողքով
անցնում ե, բոլորն ել նախանձելով նայում են
յերկաթե հսկային ե թուլացած բաց թողնում
գութանների մաճերը:

* * *

Գյուղի տները սուռնիլ պես պղպիլ են լեռան
լանջին: Լեռան ստորոտում տարածված են բերրի
հողամասերը:

Վարելահողերը կիսելով, անցնում ե մի անար-
կու գետ:

Կամուրջ չունի:

Անցյալում գյուղացիները կամուրջ կառուցե-
լու մասին բոլորովին չեն մտածել, թեկուզ նրա
անհրաժեշտութիւնը զգացել են բոլորը:

Առևտրական Մաքունց Զավադը լատտանման
մի շարժվող կամուրջ եր կառուցել ե վորոշ գու-
մար ստանալով, գյուղացիներին մի ամից մյու-
սըն եր անց կացնում:

Զավադը տանայակ տարիներով շրջակա գյու-
ղացիներից ստացած յեկամուտով գետի ուղղու-
թյամբ բնդարձակ հողամասեր եր գնել ե մի
յերկհարկանի տուն կառուցել աշխտել:

Սորհրդաշնացումից հետո յել Զավադի կա-
մուրջը դեռ կանգուն եր:

* * *

Ժպտում եր՝ զարնանային արեւը:

Ժպտում եյին ե կոլխոզի հողամասում հավաք-
ված, շրջակա գյուղերից յեկած գյուղացիները:

Ընդհանուր ժողով ե:

Որակարգում դրված ե կամուրջ կառուցելու
հարցը:

Հավաքվել են մոտ յերկու հազար գյուղացի,
լենջա գյուղի խորհրդի նախագահ ե կոլխոզ-
նիկ Դանիելը ժողովը բանաչով ասում ե.

— Ընկերներ, այսօր մենք հավաքվել ենք մի
դժվար հարց լուծելու համար:

Տիրեց խորը լուռթյուն, բոլորն առաջ քաշ-
վելով, նայում են Դանիելի գեմքին:

— Դուք գիտեք,— շարունակեց Դանիելը,—
վոր ներկայումս խորհրդային իշխանութիւնը
մեճ ուշադրութիւն ե դարձնում գյուղին: Մեզ
ողնում ե կոլխոզներ կազմակերպելու, մեր գրու-

Թյունը բարեկամելու համար: Այդ բոլորը հաջող կատարելու, մեր ճանապարհները լավացնելու, համ ել Զավադի լեզուն կարճացնելու համար՝ կոլխոզնիկներն առաջարկում են գետի վրա մի հիմնավոր յերկաթե կամուրջ կառուցել:

— Յեա առաջարկում եմ մի հանձնաժողով ընտրենք, ուղարկենք կենտրոն այդ հարցը լուծելու համար.—միջամտեց կոլխոզնիկ Վերդին:

— Զավադը մեր աչքի պուպուն հանել ա, շատ լավ եք անում, յես նոր կամուրջ շինելու համար մի չվալ ցորեն բախշեցի— վրա բերավ գյուղի ակտիվիստ Մարիամը:

Մարիամի խոսքերը ծածկեցին գյուղացիների ուռաաններն ու ծափերը:

Ժողովը միաձայն կոլխոզնիկ Վերդու նախագահությամբ մի հանձնաժողով ընտրեց կենտրոն ուղարկելու համար:

* * *

Ամեն ինչ պատրաստ եր: Կենտրոնը հարգել եր գյուղացիների առաջարկը:

Ամառվա սկզբին սկսեցին կամրջի կառուցման աշխատանքները: Կամուրջը կառուցում են Զավադի տան մոտ գտնվող հողամասի վրա:

Քաղաքից յեկած ինժեները քրտնքի մեջ կորած աշխատում եր և ցուցմունքներ տալիս բանվորներին:

Բանվորները հսկա մեքենաների ոգնությամբ

յերկաթե ձողերը և ունները խրում են գետի կուրծքը և քարերն ու բետոնած ցեմենտը դարսում:

Շ, ջակա գյուղերից ամեն որ հարյուր հոգի հերթով դալիս են աշխատանքին:

Շինարարական նյութերը քաղաքից գյուղացիներն են իրենց սայլերով բերում:

Շարժվում են մեքենաները, հարյուրավոր կոշտ ձեռքեր աշխատեցնում են նրանց, յերկաթե ձողերը ծառանում են գետի մեջ, սայլերը ձոճում ու բոլորի սրտերն ել խնդում են:

Զավադն իր մի քանի համախոհների հետ, քիթն ու մոռլթը կախած, մտածում եր...

* * *

Գիշերն իր անսահման սև սավանը փռել եր ամենուր:

Գյուղացիները հանգիստ քուն եյին մտել:

Բայց Զավադի բատրակ Վանոն դեռ աշխատանքները չեր վերջացրել և շվշվացնելով գործը շարունակում եր:

Հանկարծ տան դուռը ձոռաց:

Կաշվե ֆրենչավոր, անծանոթ մի մարդ, մի փոքրիկ արկղ կոնստակին պինդ բռնած դուրս յեկավ և զգուշությամբ, շուրջը դիտելով, մթության մեջ անհայտացավ:

Ֆրենչավոր մարդու արտաքինն ու նրա բոպեյապես անհայտանալը, կասկածանքի մեջ դրեց Վանոյին:

— Եստեղ միբան կա.—մտածեց նա և նայե-
լով նրա ուղղութեամբ շարունակեց աշխատանքը:
Քիչ հետո, Զավաղը մի քսակ վերցրած դուրս
յեկավ պատշգամբ, ապա իջավ բակն ու մոտե-
ցավ Վանոյին, պատվիրեց տունը հսկել և բակի
դուռը փակելով, հեռացավ:

Զավաղի բաղցր խոսակցութիւնը և բոպե-
յապես հեռանալն ավելի խորացրեց Վանոյի
կասկածը:

Նա պահ մի անշարժ մնաց կանգնած, յերկար
մտածեց, բայց իրեն հաշիվ տալ չկարողացավ:

— Եղ Ֆրենչավոր սատանի ձուռը վրտոմ-
դից ա յեկել եստեղ, ի՞նչու, համար ա յեկել: Տեո-
նես յերկուսով ես մթանը, վրտեղ գնացին:

Շունը դունչը ցցելով սկսեց վրոնալ և ցատ-
կոտել:

Վանոյի սիրտն ահ ընկավ: Դուրս յեկավ բա-
կից ու թփերի արանքով կամաց-կամաց շուրջը
դիտելով գնաց:

— Մ... ս... ս...—լավեց խավարի միջից:

Վանոն թփի հետեին թաքնվելով նայեց
շուրջը

— Մ... ս...—հեռվից փոխադարձաբար նը-
րան պատասխանեց մի ուրիշը և թփերի արան-
քից դուրս գալով գնաց կամուրջի ուղղութեամբ:

Նրանք կուգեկուզ մոտեցան կամուրջին, իսկ
Վանոն հեռվից սկսեց դիտել:

Ֆրենչավոր մարդը ձեռքի արկղը գետնին

դնելով բաց արավ, հանեց մի ինչ վոր բան. ու
կամուրջի արանքով մտավ գետը:

Վանոն դժվարութեամբ նշմարում եր ֆրեն-
չավոր մարդու շարժումները: Ամբողջ կես ժամ
դիտում եր Վանոն, բան չեր հասկանում: Վեր-
ջապես ֆրենչավոր մարդը դուրս յեկավ կամուր-
ջի տակից:

Զավաղն ել իր թագստից դուրս գալով միա-
ցավ նրան: Յերկուսն ել կուգեկուզ անհետացան
մթութեան մեջ:

Մինչ նրանց տուն գալը, Վանոն արդեն
տուն եր հասել և շարունակում եր իր աշխա-
տանքը:

Ֆրենչավոր մարդն ու Զավաղը վերադար-
ձան, ապա քիչ փոփսացին և իրարից բաժանվե-
ցին:

— Արա Վանո, գործդ չվերջացրի՜ր—բացա-
կանչեց Զավաղն ու առանց պատասխանի մտավ
տուն:

— Ես ա վերջացնում Լ մ, ասաց Վանոն,
յետ նայեց և նկատեց, վոր Զավաղը մտավ
տուն: Այնուհետև նա գործը թողեց և ծանր
մտքերի մեջ թաղված գնաց քնելու:

Բայց քնել չկարողացավ: Դուրս յեկավ տը-
նից և իմանալով, վոր Զավաղը քնել է, աճապա-
րեց դպրի կոլսողի տները՝ կոլսողնիկ Վերդու
մոտ:

Առավոտյան ժամը 9-ն էր։
Կամուրջի վրա ծածանվում էյին կարմիր
դրոշակները։

Գեղեցիկ էր ուրը։

Շրջակա բոլոր գյուղացիները յեկել էյին կա-
մուրջի հանդիսավոր բացմանը մասնակցելու։

Ինժեները կարգադրություններ էր անում,
կամուրջի սյուների ամրությունն ստուգում և
ժպտալով գյուղացիների հարցերին պատասխա-
նում։

Կոլխոզի տրակտորը ծաղիկներով զարդար-
ված կանգնել էր կամուրջի առաջ։

Ձուռնան գիլ ձայնով սկսեց նվագել։

Գյուղացիները պար մտան։

Այստեղ էր և Վանոն։ Վերդու կողքին կանգ-
նած ժպտում էր և զարմացած նայում կամուր-
ջին, վոր բարձր լեռան պես կանգնել էր գետի
մեջ ու յերկաթե թևերը փռել գետի ափերը։

Այդտեղ էր և կուլակ Ջավադը։ Նա քաշվել
էր մի կողմ և հաճախ ժամացույցին էր նա-
յում։

Ժամը տասնութեկից կես անց էր։

Ձուռնան դադարեց։ Լոռեցին և բոլոր գյուղ-
ացիները, ինժեները բարձրացավ տրակտորի
վրա։ Տրակտորը վիրավորված առյուծի պես
սկսեց գոռալ ու գետինը շարժել։

Կոմբլիշի քարտուղար Մինասը կամուրջի
վրա կանգնեց, մի քանի խոսքով միտինգը բաց

արավ, հետո վողջույնի խոսք տվավ կենտրոնից
յեկած մի քանի ընկերներին։ Ապա կամուրջի
ճամբան փակող կարմիր թելը կտրեց։

Ձուռնան նորից սկսեց նվագել, տրակտորը
փնչալով առաջ անցավ, իսկ Ջավադը շտապ
սկսեց նայել ժամացույցին։

Տասնուերկուսից անց էր։

Կամուրջի մյուս կողմում հավաքված գյուղա-
ցիները ուրախությամբ ընդունեցին տրակտորը։
Քիչ հետո ինժեներին ձեռքների վրա սկսեցին
ձռնել։

— Բա դինամիտը, ինչո՞ւ չպայթեց... դար-
մացած ինքն-իրեն հարց տվավ Ջավադը։

Նա դեռ ուշքն իր գլուխը չէր հավաքել,
յերբ գյուղացիք բռնեցին նրան։

Վանոն գազան էր կտրել։

— Դու եյլ՞ր ուղում կամուրջը պայթեցնել։ —
ասաց նա ու ձեռքը բարձրացնելով խփեց Ջա-
վադին։

Ջավադի դավադրության լուրն ամենքն էլ
իմացան։ Ամենքը հարձակվեցին Ջավադի վրա։

Ջավադի վոտքերը կտրվել էր գետնից, նա
արդեն գյուղացիների ձեռքերի վրա էր։ Նրան
դեպի կամուրջն էյին քարշ տալիս։

Ինժեների և կոմբլիշի քարտուղարի ջանքերն
իզուր անցան. նրան գլխիվայր կամուրջից նե-
տեցին ցած։

ԳԱՂՏՆԻ ՊՈՍՏԸ ՅԵՎ ՍՆԱՅՊԵՐԸ

Յերեկոյան, յերբ մութն իր լախածավալ թիւիկերը տարածեց սաղարթախիտ անտառների և դաշտերի վրա, յերբ չափականերն սկսեցին իրենց դարհուրելի վռնոցը, յերկու յերիտասարդ կարմիր բանակայիններ ֆրոնտի առաջին գծից դուրս գալով, սողեսող ճանապարհվեցին դեպի ձորը և հանդարտ սահող գետի կողքին, մի փոքրիկ թփի յետեւում, ցեխի մեջ անշարժ նստեցին:

Նրանք լավ գիտեյին, վոր լուրջ պիտի լինել ուղիմադաշտային գաղտնի պոստի պարտակա նությունները կատարելու ժամանակ:

Նրանք լուռ էյին. առանց խոսելու հետեւում էյին ամեն մի ձայնի և շշուկի. առանց շարժվելու նայում էյին դեպի առաջ և նրանց աչքերը մութը թափանցելով անտղում էյին ամեն ինչ:

Չե վոր այդ չորս աչքերն ու չորս ականջներն են վոր ամենից առաջ պիտի թշնամուն տեսնեն ու լսեն նրանց ձայները և այդ մասին շտապ հայտնեն զխափոր շտաբին:

Գիշեր էր: Շուրջը՝ լուռ: Հեւում շատ հեւում չափակաները մերթ ընդմերթ վռնում էյին:

Թփի յետեւին չորած բանակայինը ձեռքով արավ ընկերոջը: Մյուս բանակայինը մոտեցավ նրան:

— Վանյա, կարծես մեկը դեպի մեզ է գալիս. առանց հետ նայելու ասաց նա:

— Ո՞վ...

— Սպասիր...

Մեկը սողեսող, գետնին փորսող տալով առաջ էր գալիս...

— Հայտնեմ, Սյոմա...

— Սպասիր...

Տերեվներն ու չորացած խոտերը խշխշում են, իսկ մեկն էլի փորսող տալով առաջ է շարժվում: Նա ավելի յե մոտենում: Սյոման հրացանը կըրծքին առնելով ծառացած մնաց: Վոչինչ չէր յերեւում նրա աչքերին, բացի փորսող տվողից:

— Թե վողջ-վողջ կըռնեմ...

Այդ պահին փորսող տվողը գետի ականքին մոտենալով կանգնեց բանակայիններից մի հինգ քայլ հեռավորութամբ:

Սյոման այլեւս սպասել չկարողացավ:

— Կանգնիր...

Ձեռքերը բարձրացրեւ...

Ու յերկու հրացան ուղղվեց փորսող տվողի վրա, իսկ նա հանկարծակիի յեկած իսկույն բարձրացրեց ձեռքերը:

Սյոման մոտեցավ նրան, կարճիկ հրացանը խլեց, կողքերի ուղեքները վերցրեց և սկսեց զրպանները փնտրել, իսկ Վանյան հրացանը ձեռքին ուղղած մնացել էր կանգնած:

—Վան . . . այս մոռութի գրպանում նամակներ ու թղթեր ել կա. — մի կապոց թղթեր հանելով ծիծաղեց Սյոման և ջղայնությունից ցանկացավ բռնցքակոծ անի նրան:

— Հը, ընկերներ չունիս, մենակ ես, մոռութ . . .

Ձինաթափ յեղովը չխոսեց: Հետո նրա ձեռքերը կապեցին: Սյոման մոտեցավ դաշտային հեռախոսին և զանգահարեց: Մինչ տասը բուլե անտառի խորքից դուրս յեկան յերկու հրացանավոր կարմիր բանակայիններ և մոտեցան նրանց ապա բռնված մարդուն շտաբ տարան:

Ելի առաջվա մեռելային դրությունը. ամեն ինչ լուռ էր. գետը կամացուկ հոսում էր, իսկ հեռվում, շատ հեռվում վռնում էին չախկալները:

Չանցած կես ժամ, այնտեղ չարդախներում, ու կարմիր բանակայինները սպասում էին հարձակման հրամանին, ձայներ բարձրացավ, ձիերի վոտների դոփշունները բազմացան ու սայլերն սկսեցին ճռճալ:

— Ե՛խ, ռազմական գաղտնիք, ինչքան սիրտ կրճող ես լինում. — ինքն իրեն ասաց Սյոման և ելի աչքերը հառեց զեպի դիմացի անտառը: Այս անգամ մթության մեջ թվում էր նրան, թե կռիվ է և փոքրիկ թիերն ու քամուց շարժվող ծառերի կատարները նրան թվում էր, թե հսկայական մի բանակ առաջ էր շարժվում:

Ժամանակը սահում էր: Լուսադեմի վրա դիմացից թշնամու վեց թնդանոթներ սկսեցին

խաչաձեպ հրաձգությունը: Այնուհետև լեռների կատարներից տկտկացին գնդացիները, ապա սավառակներն սկսեցին ողում ճախրել, իսկ զրահապատ ավտոները խճուղիներն ընկած՝ առաջ սահեցին և կատաղած գոմեշների պես կռվի մտան լարային արգելակներին հետ:

— Իսկ մերոնք . . . Մի՞թե նրանք կգան . . .

Մտածեցին յերիտասարդ կարմիր բանակայինները:

Այդ պահին զնգզնգաց հեռախոսը: Սյոման շտապ մոտեցավ ապարատին:

Հեռախոսի լսափողից լսվում էր մի բարակ ձայն:

— Ձեր բռնած մարդը թշնամու սուբհանդակն է . . . այժմ թշնամին կտրված է իր աջ թեվից . . . մերոնք առաջ են շարժվում հաստատ իմանալով թշնամու տեղը . . . իսկ ձեզ ոգնության և գալիս . . .

— Ո՛ւ, յես նրանց մերժ . . . ուրախությունից պայթեց Սյոման:

Հեռախոսի լսափողից լսվում էր բարակ ձայնը:

— Դուք մնում եք զաղտնի պոստում մինչև լիոր առանձին կարգադրություն կլինի . . .

— Ախր յես ել եմ ուղում, հրացանս ժանդոտեց. — բարկանալով հեռախոսի լսափողը զարկեց ապարատին ու լուռ մնաց նստած:

— Հը, Սյոմա ինչ պատահեց. — փսփսաց Վանյան:

—Մնացինք այստեղ, կարծես թե մեզ ուղարկել են յերեխաների պես լվացքին հսկելու համար:

—Ի՛սկ...

—Դե ել ի՞նչ իսկ, նս՛ւ կռիւլ ե, այժմ մենք ենք հարձակւում, մեր բռնած մարդը նրանց սուրհանդակն ե. նրա գրպանի նամակներում ամեն ինչ գրած ե, թե թշնամին այս գիշեր ինչ պես պիտի հարձակվեր մեզ վրա...

—Ո՛ւ յես նրանց...

Ընդհատվեց խոսակցութիւնը. նրանք ելի անշարժ նստած սկսեցին հետեւել ամեն ինչի: Իսկ հեռւում գործում էյին թնդանոթները, շրպելները ուղբ պատռելով սուլում էյին... գնդացիները տկտկալով աշխատում ու պար էյին գալիս:

Դեռ մութն իշխում եր: Հեռվից աննշմարելի կերպով պսպղում եր արշալույսը:

—Բ՛սւմ...

—Բ՛սւմ... բ՛սւմ...

Գործի ընկան կարմիրները հեռաձիգ թնդանոթները:

—Տա՛...

—Տա՛... տա՛... տա՛...

Սկսեցին շվշվալ „Մաքսիմներ“:

Կարմիր բանակը հաղթական թափով հարձակվեց թշնամու վրա բոլոր ֆրոնտներով, իսկ ձորերին սկսեցին արձագանքել նրանց:

—Տա՛...

Այդ պահին գետի ղիմացի անտառից պայ-

թեց մի հրացան: Սյուժան կողքիցը բռնելով ծանր ախ քաշեց յեւ թափալվեց գետին:

Վանյան նայեց շուրջը, սակայն վոչ վոքի չհկատեց:

—Մնայալեր...

Հիշեց նա հրամանատարի խոսքերը յեւ թփի մյուս կողմն անցաւ:

—Տա՛...

Նորից նույն հրացանը պայթեց յեւ Վանյան եւ անշարժ ընկաւ Սյուժայի կողքին:

Սյուժան դեռ կրծքիցը բռնած փոքրոց տալով արյան մեջ, ցանկանում եր մոտենալ հեռախոսի ապարատին:

Յեւ յերբ նա արնոտ ձեռքը մեկնեց լսափողին, այլեւս նրա մատները դադարեցին աշխատելուց յեւ սեղմվելով լսափողը ֆնացին անշարժ: Լույսը բացվել եր:

Թնդանոթներն ու գնդացիները դադարել էյին աշխատելուց: Սափառակներն անհետացել էյին, իսկ ձորերը ցերեկվա բուն էյին մտել ազադակող գիշերից հետո:

Թշնամին պարտվել յեւ մեծ կորուստներ եր տվել:

Ռազմադաշտային զադտնի պոստի հեռախոսի ապարատը յերկար զանգահարում եր:

Այնտեղ, հեռախոսի ապարատի մոտ, զադտնի պոստում ընկած էին յերիտասարդ կարմիր բանակայիններ՝ Սյուժան յեւ Վանյան:

Մնայալերը խլիլ եր նրանց կյանքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Պայքարը	3
2. Հաշմանդամները	49
3. Վրեժ	59
4. Դինամիտը	82
5. Գաղտնի պոստը և սնայակերը	90

Baş mətbuat mədirliyi məvəkilliyi № 3956 Sifariş № 891
 Tiraz 1500. İstehsa'ata verilmiş 25/VII - 4. Çapa verilmiş
 25/X- 34. Çap-listi 3. Kağız formatı 2X94.
 Azərnəşr mətbəəsində basıldı. Bakı, Əli Bəyramov kü-
 çəsi, 26-lar adına „Kitab sarayı“

ՀՀ Ազգային գրադարան



NL0332122

Գինը 1 ա. 50 Կ.
Կաղմը 30 Կ.

1

24194

1
3

Դեօրկ Բլանց

Ր Ա Տ Տ Կ Ա Յ Ի

Աեզրնեշր
Բաքս—1934